

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ¹

Հրայա Արզումանյան

Ռազմավարական մշակույթը թափանցում է ողջ ռազմական ոլորտ՝ միավորելով այն մեկ ամբողջի մեջ և պատասխանելով այն հարցերին, թե ինչու, երբ և ինչպես են ժողովուրդը և նրա զինված ուժերը պատերազմ մղում: Այն ժողովրդի բարոյական արժեքների և բարձրագույն նպատակների դրսևորումն է: Այս կամ այն մշակույթի, ազգի համար այս կամ այն ռազմավարության բարոյական կողմը և լեգիտիմությունը կարող են ենթարկվել լայն փոխակերպումների: Չնայած ռազմավարական մշակույթ հասկացության լայն ընդգրկմանը և խորությանը, ռազմավարական հետազոտությունները խիստ պրագմատիկ դիսցիպլին են: Աշխատանքում դիտարկվող տեսությունները և հայեցակարգերն ավելի շատ պատերազմի ոլորտին և պատերազմական ժամանակին, քան մեծ ռազմավարության և ազգային անվտանգության խնդիրներին ուղղված կողմնորոշում ունեն:

Ռազմավարությունը բարդ է և, անշուշտ, տարբերվում է ինչպես զինվորական հմտությունից, այնպես էլ քաղաքական փորձից: Ստրատեգիստը ռազմական հզորությունը պետք է կապի քաղաքականության նպատակների հետ: Դրա համար պահանջվում է ծանոթ լինել առկա բոլոր ռազմավարական հայեցակարգերին, որոնց հարկ է վերաբերվել որպես գործիքանու, որը թույլ է տալիս ընտրել ստեղծված իրադրության համար օպտիմալ ռազմավարությունը կամ ձևավորել մի քանի տեսությունների և մոտեցումների համակցություն:

Ռազմավարության տեսությամբ զբաղվելիս չպետք է մոռանալ ռազմավարության մասին հին ասույթը. «Այն մարդու համար, ով չի պատրաստվում իրականացնել իր գաղափարները, անհնար ոչինչ չկա», և այն, որ մարտադաշտում զինվորականների բանիմացությունը չի կարող փոխհատուցել քաղաքական գործիչների հիմարությունը նպատակների և առկա միջոցների որոշման գործում:

Չնայած 21-րդ դարում ռազմավարական պատկերն արագ փոփոխության է ենթարկվում, այնուամենայնիվ, ռազմավարության բարդությանը

¹ Հ. Արզումանյանի «Ռազմական մշակույթ և ռազմավարություն» աշխատության 1-ին մասը հրատարակվել է հանդեսի նախորդ համարում:

հանգեցնող հիմնական խնդիրներն անփոփոխ են մնում Հին Հռոմի և Բրիտանական կայսրության ժամանակներից ի վեր:

Պատերազմի մշուշի և անհամաձայնության ցրումն ու ռազմավարական հորիզոնների գնահատումը բոլոր ժամանակներում պահանջել են մտավոր ուժերի մեծագույն լարում: Ռազմավարական կանխատեսումներով զբաղվելիս հարկ է նկատի ունենալ, որ ապագան անկանխատեսելիության հետ մեկտեղ կրում է ռազմավարական անսպասելիության տարր:

Ապագայի անկանխատեսելիությունը խիստ կարևոր է դարձնում այլընտրանքային սցենարների և համապատասխան ռազմավարությունների մշակումը: Ռազմավարական պլանավորմամբ զբաղվելիս կարևոր է ըմբռնել, որ գոյություն ունեն ռազմավարական հորիզոնների տարբեր տեսակներ, որոնք որոշում են, թե որքան հեռու ստրատեգիստը կարող է կանխատեսել իրադարձությունների զարգացումը:

Սրբնթաց փոփոխվող ռազմավարական միջավայրը հանգեցնում է նրան, որ մեր օրերի առավել հրատապ, եթե ոչ գլխավոր ռազմավարական հայեցակարգն է դառնում ռազմավարական անսպասելիությունը: Եվ հիմնական խնդիրը ոչ այնքան ինքը՝ անսպասելիությունն է, որքան անսպասելիության ռազմավարական էֆեկտը, և հարցն այն է, թե ինչպիսին կլինեն այդ անսպասելիության հետևանքները:

1. Ռազմավարությունը և ռազմական մշակույթը

Մուն Ցզին գրում էր. «Եթե գիտես նրան (թշնամուն) և գիտես քեզ, մարտնչիր թեկուզ հարյուր անգամ, վտանգ չկա. եթե գիտես քեզ, բայց նրան չգիտես, մի անգամ կհաղթես, մյուս անգամ պարտություն կկրես. եթե չգիտես ո՛չ քեզ, ո՛չ նրան, յուրաքանչյուր անգամ, երբ մարտնչես, պարտություն կկրես» [1, p. 84]: Իրեն ճանաչելու համար զինվորականը պարտավոր է իմանալ իր ժողովրդի ռազմավարական մշակույթը, որը բարդ և բազմապլան երևույթ է: Այն ներառում է աշխարհագրությունը, ժողովրդի պատմությունը, անվանդույթները, արժեքները, կենսակերպը, սովորույթները, նվաճումներն ու անհաջողությունները, նրա՝ ստեղծվող իրավիճակին հարմարվելու, խնդիրները լուծելու, ծագող սպառնալիքներին դիմակայելու, ուժ կիրառելու ունակությունը և այլն [2, p. 24]:

Ռազմավարական մշակույթն ընդգրկում է ողջ ռազմական ոլորտը՝ միավորելով այն մի ամբողջի մեջ և տալով պատասխաններն այն հարցերի, թե ինչու, երբ և ինչպես են ժողովուրդն ու նրա զինված ուժերը պատերազմ վարում: Այն ժողովրդի բարոյական արժեքների և նպատակների արտացոլումն է: Հրաման ստանալով՝ հրամանատարը շտաբի հետ միասին ձեռնամուխ է լինում ապագա գործողության պլանի մշակմանը: Ընդ որում՝ նրանք

օգտագործում են ինչպես անձնական, այնպես էլ զինված ուժերի հավաքական փորձը, հենվում պրոֆեսիոնալ հմտության և ստացած կրթության, ռազմական դոկտրինի և պատերազմի սկզբունքներին [3]:

Ինչպես արդեն ասվել է, ամերիկյան ռազմական մշակույթը (ներառյալ և ռազմավարականը) փոքր-ինչ վերից է նայում այլ մշակույթներին և ելնում է այն բանից, որ նրա չափանիշներն ու արժեքները այդպիսին են նաև մնացյալ ողջ աշխարհի համար: Ինչպես նկատում է մեկնաբաններից մեկը, «Արևմուտքի համար՝ ընդհանրապես և ամերիկացիների համար՝ մասնավորապես վտանգավոր է հավատալ, որ մյուսները ռազմավարությունը, ինչպես նաև ուժի բնույթն ու նրա կիրառումը տեսնում են անզրամերիկյան տեսապակու միջով» [4, pp. 80-81]: Չնայած ռազմավարական մշակույթ հասկացության ընդգրկունությանն ու խորությանը, ռազմավարական հետազոտությունները խիստ պրագմատիկ դիսցիպլին են, որն ուսումնասիրում է ծավալվող իրադարձությունները, կանխատեսում է իրադարձության առավել հավանական զարգացումը՝ ընդունելով հանդերձ, որ այն բավական վիճելի է [5, p. 1]:

Ինչպես արդեն նշել ենք, պատերազմի, ռազմական մշակույթի և ռազմավարության հարթությունում գոյություն չունեն նոր գաղափարներ, և ստրատեգիստի առջև բացվում է գաղափարների համաշխարհային գանձարանը, որտեղ կուտակվում է պատերազմի տեսաբանների և պրակտիկների նախորդ սերունդների հազարամյա փորձը: Ժողովրդի մտավոր ընտրանին, արդիականությանը համահունչ դոկտրիններ և հայեցակարգեր ձևավորելիս, դիմում է նախորդ սերունդների փորձին՝ վերցնելով գաղափարներ և սահմանումներ, որոնք այնուհետև մեկնաբանվում և ձևակերպվում են նոր դարաշրջանի լեզվով և գոյություն ունեցող հասարակական ձևերի շրջանակներում [5, p. 21]:

Մա նշանակում է, որ չնայած գիտական լեզվի և մեթոդաբանության օգտագործմանը, ռազմավարությունը, այնուամենայնիվ, բարձր արվեստ է և ոչ թե գիտություն [6, p. 69]:

Ռազմավարությունը ոչ քաղաքականություն է և ոչ էլ պատերազմ, այլ ավելի շուտ կամուրջ է նրանց միջև: Վերաբերվելով պատերազմի բարձրագույն մակարդակներին և հանդիսանալով այն միջավայրը, որը թույլ է տալիս «կցակարել» պատերազմի տարածքը մի ամբողջության մեջ, ռազմավարությունն առանցքային դեր է խաղում ռազմական տեսության մեջ, որում թույլ տրված սխալները միշտ թանկ են նստում կռվող կողմի վրա: Ֆելդմարշալ Կեյտելը մի առիթով նշել է, որ «մարտավարության և օպերատիվ մակարդակի սխալները կարող են ուղղվել ընթացիկ պատերազմի ընթացքում, մինչդեռ ռազմավարության սխալները կարող են ուղղվել

միայն հաջորդի ժամանակ» [5, p. 21]:

Ռազմավարությունը բարդ է և, անկասկած, տարբերվում է ինչպես զինվորական հմտությունից, այնպես էլ քաղաքական փորձից: Ստրատեգիստը ռազմական հզորությունը (ռազմավարական էֆեկտը) պետք է կապի քաղաքականության նպատակների հետ: Ռազմավարական մտածողության բացակայությունը հանգեցնում է չկշռադատված և պարտվողական գործողությունների, որոնցով, օրինակ, առատ է ժամանակակից ամերիկյան քաղաքականությունը: Մյուս կողմից՝ չի կարելի ընկնել մյուս ծայրահեղության մեջ, երբ ստրատեգիստների հանձնարարականներին վերաբերվում են իբրև հաջողության բացարձակ չափանիշների: Ստրատեգիստի կանխատեսումները և երաշխավորությունները կարող են սխալ դուրս գալ, եթե զինված ուժերը փայլուն, բայց «ոչ ճիշտ» պատերազմ են վարում կամ, հակառակը՝ վատ է վարվում «ճիշտ» պատերազմը» [7, pp. 83-84]:

Ստորև բերվում է առավել կարևոր, ինչպես նաև դասական ռազմավարական հայեցակարգերի համառոտ տեսությունը, որոնք արդիական են Հայաստանի¹ համար:

Ռազմավարությունն ըստ Սուն Ցզիի. Չինացի ռազմական փիլիսոփա Սուն Ցզին ռազմավարության որևէ սահմանում չի տալիս, բայց բերում է դրա կիրառության գործնական օրինակներ: Նա մնում է առանց հակամարտող կողմերի բանակների ուղղակի բախման հաղթանակի հասնելու կողմնակիցը. «... հարյուր անգամ մարտնչելը և հարյուր անգամ հաղթելը լավագույններից լավագույնը չէ. լավագույնից լավագույնը օտար բանակը հնազանդեցնելն է՝ առանց մարտնչելու» [1, p. 84]:

Սուն Ցզին այն դպրոցի մտավոր հայրն է, որը ջանում է հաղթանակի հասնել մանրի կամ հակառակորդի հոգեբանական խառնաշփոթի միջոցով, ինչն այնքան էլ բնորոշ չէ հին Չինաստանին: Նա նաև պաշտպանում է հակառակորդի ուժերը ջլատելու և մաս առ մաս ջախջախելու մոտեցումը. «Դրա համար, եթե ես հակառակորդին ցույց տամ ինչ-որ ձև, իսկ ինքս չունենամ այդ ձևը, ես կպահպանեմ ամբողջականությունը, իսկ հակառակորդը մասերի կբաժանվի: Պահպանելով ամբողջականությունը՝ ես մեկ կկազմեմ. մասերի բաժանվելով՝ հակառակորդը տասը կկազմի: Այդ ժամանակ ես իմ տասով կհարձակվեմ նրա մեկի վրա: Մենք այդ ժամանակ շատ կլինենք, հակառակորդը՝ քիչ» [1, p. 95]:

Սուն Ցզին կարծում էր, որ պաշտպանությունը, պատերազմի ուժեղ ձև լինելով, այնուամենայնիվ, թույլ չի տալիս հասնել հաղթանակի, որը

¹ Այստեղ և այսուհետ Հայաստան ասելով նկատի ունենք երկու հայկական պետությունները՝ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որոնք մշակութային և ռազմատարատեգիական մեկ ամբողջություն են:

հնարավոր է միայն հարձակողական գործողությունների միջոցով. «Անպարտելիությունը պաշտպանություն է, հաղթելու հնարավորությունը հարձակում է: Երբ պաշտպանվում են, ուրեմն ինչ-որ բանում պակասություն կա, երբ հարձակվում են, ուրեմն ամեն ինչ ավելցուկով է: Նա, ով լավ պաշտպանվում է, թաքնվում է դժոխքի խորխորատներում, նա, ով լավ հարձակվում է, գործում է երկնքի բարձունքից» [1, p. 87]:

Ռազմավարությունն ըստ Նապոլեոնի. Նապոլեոնը ռազմավարությունը սահմանում է որպես «Ժամանակի և տարածության օգտագործման արվեստ», որոնք լրացվում են Կլաուզևիցի եռամիասնության տարրերի և տեխնոլոգիայի ոլորտի հետ բարդ փոխգործակցություններով [8, p. 161]: Սակայն միայն նապոլեոնյան պատերազմներից հետո ի հայտ եկավ հետզհետե բարդացող ռազմավարության ընկալումը, որն արտացոլվել է Կլաուզևիցի նախագգուշացման մեջ. «Չեն կարող գոյություն ունենալ մեծ ռազմավարական խնդիրների զուտ ռազմական գնահատականի մասին հարցը և դրանց լուծման զուտ ռազմական սխեմաները» [9, p. 9]:

Ռազմավարությունն ըստ Կլաուզևիցի. Համաձայն Կլաուզևիցի՝ «Ռազմավարությունը մարտի օգտագործումն է պատերազմի նպատակների համար, հետևաբար՝ այն ռազմական գործողությունների առջև ընդհանուր առմամբ պետք է դնի այնպիսի նպատակ, որը կհամապատասխանի պատերազմի իմաստին: Այն կազմում է պատերազմի պլանը և կապում ռազմական գործողության առաջադրած նպատակը այն գործողությունների շարքի հետ, որոնք պետք է հանգեցնեն դրա իրականացմանը. այլ կերպ ասած՝ այն ուրվագծում է առանձին կամպանիաների նախագծերը և տալիս դրանցում առանձին մարտերի դիրքորոշումը» [10, p. 218]:

Ռազմավարության այս սահմանումն ամբողջական չէ, քանի որ ներկայացնում է պատերազմի զուտ ռազմական և նույնիսկ գործառնական մակարդակը: Փաստորեն, Կլաուզևիցը խոսում է ռազմական գործողությունների թատերաբեմում ռազմական կամպանիայի ռազմավարության, բայց ոչ պատերազմի մասին [11, p. 79]: Կլաուզևիցն արժեքավոր է ավելի շատ որպես ռազմական փիլիսոփա, քան որպես ինստրումենտալ ռազմավարության մշակող, որը պատասխանում է այն հարցերին, թե «ինչպես է» ձեռք բերվում հաղթանակը պատերազմում, իսկ նրա գաղափարներն արտացոլում են 19-րդ դարում ռազմավարության ըմբռնման ընդհանուր մակարդակը:

Ի տարբերություն Սուն Ցզիի, Կլաուզևիցն իր պատերազմի հայեցակարգում ընտրում է ոչ թե «հակառակորդի մտահղացումների կտրումը», այլ ճակատամարտը և մտցնում է վճռորոշ ճակատամարտի հասկացու-

թյունը, որից կախված է պատերազմի ելքը: «Էներգիան, որով իրականացվում է առաջին հետապնդումը, հենց առավելապես էլ որոշում է հաղթանակի արգելքը. այդ հետապնդումը կազմում է հաղթանակի ասես երկրորդ ակտը, շատ դեպքերում՝ նույնիսկ ավելի կարևոր, քան առաջինը, և ռազմավարությունը, տվյալ պարագայում մոտենալով մարտավարությանը, որպեսզի նրա ձեռքից վերցնի ավարտված գործը, առաջին անգամ դրսևորում է իր հեղինակությունն այն բանում, որ պահանջում է հաղթանակի այդ ավարտը» [10, p. 393]:

Այնուհետև Կլաուզեիցը հիմնավորում է հակառակորդի ծանրության (ձգողականության) կենտրոնի (իր կողմից մտցված հասկացություն) գրոհի անհրաժեշտությունը. «Յուրաքանչյուր կռվող կողմի՝ առանձին պետություն կլինի, թե պետությունների միություն, զինված ուժերը հայտնի միասնություն են ներկայացնում և, հետևաբար, ինչ-որ կերպ միմյանց կապվում են. այնտեղ, ուր կա կապը, ի հայտ է գալիս նաև ծանրության կենտրոնի հետ համանմանությունը: Ուստի, այդ զինված ուժերում գոյություն ունեն ծանրության հայտնի կենտրոններ, որոնց շարժումը և ուղղությունը վճռական ազդեցություն են գործում մնացած կետերի վրա...» [12, p. 237]:

Նա դիտարկում է պատերազմի սկզբի մի քանի հնարավոր սցենարներ և գալիս է այն եզրակացության, որ լավագույնը հակառակորդի (որն առավել հաճախ համընկնում է զինված ուժերի հետ) ծանրության կենտրոնի վրա հարձակումն է և նրա ջախջախումը: Այնուհետև անհրաժեշտ է գրավել երկրի մայրաքաղաքը, հետո հարձակվել նրա դաշնակիցների վրա:

Կլաուզեիցի՝ «ինչպես» է վարվում պատերազմը սկզբունքի մյուս կարևոր գաղափարը *գազաթնակետի* հայեցակարգն է. «Եղել են ռազմավարական հարձակումներ, որոնք հանգեցրել են ուղղակի խաղաղության, բայց այդպիսիներն ամենաքիչն են. դրանց մեծ մասը հասցնում էր մինչև այնպիսի պահի, երբ ուժերը բավականացնում էին պաշտպանական իրավիճակը պահելուն և խաղաղության կնքմանը սպասելուն: Այս կետին հաջորդում են արդեն բեկումը, ռեակցիան: Այս ռեակցիայի ուժը սովորաբար զգալիորեն գերազանցում է դրան նախորդող հարվածի ուժին: Այդ բեկումնային պահը մենք անվանում ենք հարձակման գազաթնակետ» [12, p. 310]:

1991-94թթ. ռազմական կամպանիան այս հայեցակարգի դասական օրինակ կարող է ծառայել: Հայկական պետությունների զինված ուժերը, հասնելով կռվմինացիոն կետին և ռազմական հաղթանակի, համաձայնեցին զինադադարին և պաշտպանողական դիրք գրավեցին: Հաջորդ բնական քայլը պետք է դառնա ձեռք բերված հաղթանակին համարժեք հաշտության պայմանագրի կնքումը և հաջորդող անխուսափելի ռեակցիային պատրաստ լինելը:

Ռազմավարությունն ըստ ժամինիի. Ժամինին հավատում էր, որ պատերազմը գիտություն է և, հետևաբար, գոյություն ունեն այն վարելու կանոններ: Նա բերում է ռազմավարության իր սահմանումը, որն ավելի ինստրումենտալ է, քան Կլաուզիցի մոտ: «Ռազմավարությունը քարտեզի վրա պատերազմի վարման և պատերազմի ամբողջ թատերաբեմի ընկալման արվեստն է: *Գրանդ* (մեծ) մարտավարությունը գորքերի՝ մարտադաշտում դասավորվածության արվեստն է անմիջապես տեղում և ոչ թե քարտեզի վրա բախումներին համապատասխան: Լոգիստիկան (ապահովումը) ընդգրկում է այն միջոցներն ու միջոցառումները, որոնք գտնվում են ռազմավարական և մարտավարական պլաններից դուրս: Ռազմավարությունը որոշում է որտեղ գործել, լոգիստիկան ապահովում է գորքերի՝ ռազմական գործողությունների վայր հասնելը, մեծ մարտավարությունը որոշում է ուժերի կիրառման և օգտագործման միջոցները» [13, p. 62]:

Ժամինիի ռազմավարությունը պարփակվում է միայն ռազմական ոլորտով և ունի դեպի ռազմական գործողությունների թատերաբեմն ուղղված կողմնորոշում: Ռազմավարության նրա մոտեցումը պատասխանում էր այն հարցին, թե ինչպես պետք է պլանավորվի ռազմական կամպանիան: Ժամինիին հաճախ քննադատում են երկրաչափական մոտեցման համար, ինչը որոշակի սահմաններում արդարացի է: Առաջին փուլում նա ընտրում է ռազմական գործողությունների թատերաբեմը և որոշում դրա վճռական կետերը: Այնուհետև ընտրվում են հենակետերը, գործողության գոտիները և հարձակման կետերը: Դրանով իսկ գործողության գիծը որոշվում է հենակետերից վճռական կետերի միջոցով դեպի հարձակման կետ գծով [11, p. 87]: Ժամինիի ռազմավարության մի շարք գաղափարներ և հասկացություններ տեղ են գտել ԱՄՆ ժամանակակից ռազմական հայեցակարգում:

Ռազմավարությունն ըստ Մոլտկեի. Ֆելդմարշալ Մոլտկեն, որ կարևոր դեր է խաղացել Գերմանիայի միավորման գործում, «Բարձրաստիճան հրամանատարների համար հրահանգներում» (*Instructions for Superior Commanders*) գրում է, որ «ռազմավարությունը առողջ դատողության կիրառումն է պատերազմ վարելիս: Դժվարությունն այն իրականացնելու մեջ է... [14, p. 276]: Փաստորեն, նա վերափոխում է Կլաուզիցի այն խոսքերը, թե «ռազմավարության մեջ ամեն ինչ չափազանց պարզ է, բայց սրանից չի հետևում, որ ամեն ինչ նաև չափազանց հեշտ է լինելու» [10, p. 221]:

Ռազմավարությունն ըստ Կորբետի. Բրիտանացի ստրատեգիստ Ջուլիան Կորբետը (*Julian S. Corbett*) ռազմավարության նկատմամբ համակարգային մոտեցման կողմնակից է և այն սահմանում է որպես «ուժի ուղղու-

թյան արվեստ՝ նպատակների հաշվառմամբ»: Նա մտցնում է նաև միջանկյալ նպատակներ հասկացությունը, որոնց միջոցով որոշվում են վերջնական նպատակները. «Մեծ ռազմավարությունը գործ ունի քողարկված (չարտահայտված), փոքրը՝ առաջնահերթ նպատակների հետ» [15, p. 308]: Արդի ռազմական եզրաբանության մեջ «մեծ ռազմավարություն» ասելով հասկանում են «ռազմավարություն», «փոքր ռազմավարություն» ասելով՝ «օպերատիվ արվեստ»:

Կորբետի մոտեցումների մեջ կարևորն այն ըմբռնումն է, որ ռազմավարությունը գործի է գցում «ազգի բոլոր ռեսուրսները պատերազմի համար: Այն պետության կառավարման արվեստի մասն է և ցամաքային ու ռազմածովային ուժերը դիտարկում է որպես մեկ ուժի մասեր, որոնք միասնաբար են կիրառվում. դրանք պատերազմի գործիքներ են հանդիսանում» [16, p. 308]: Կորբետի համար ռազմածովային ուժերի կարևորությունը ոչ թե ծովում գերիշխանության ապահովման կարողությունն է, այլ ցամաքում իրադարձությունների վրա ազդելու ունակությունը: Նա հավատում էր, որ ռազմածովային ուժերը հազվադեպ են հաղթում պատերազմում, սակայն ցամաքային ուժերի կողմից հաղթանակի հասնելու նախադրյալներ են ստեղծում: Կորբետի մտքերը տեղ են գտել ԱՄՆ արդի ռազմածովային դոկտրինում [11, p. 101]:

Ռազմավարությունն ըստ Լիդլը Հարթի (1895-1970). Հարթը ռազմավարությունը սահմանում է որպես «ռազմական միջոցների բաշխման և կիրառման արվեստ՝ քաղաքականության նպատակների իրականացման համար» [17, p. 335]: Նա տալիս է առավել ծավալուն սահմանում ևս. «Ռազմավարությունը կախված է հաջողությունից, առաջին հերթին և ամենամեծ չափով՝ նպատակների և միջոցների հաշվարկումից և կոորդինացումից: Նպատակը պետք է համամասնական լինի ընդհանուր միջոցներին, իսկ միջոցները, որ կիրառվում են վերջնական նպատակին հասնելուն նպաստող յուրաքանչյուր միջանկյալ նպատակի ձեռքբերման համար, պետք է համամասնական լինեն այդ միջանկյալ նպատակների արժեքին ու անհրաժեշտությանը. իրապես դրանք օժանդակում են վերջնական նպատակին հասնելուն, թե՛ նպաստում են օժանդակ հաջողությանը: Ավելցուկը կարող է նույնքան վնասաբեր լինել, որքան և պակասորդը» [17, p. 322]:

Ակնհայտ է, որ Հարթը խոսում է ռազմական ստրատեգիայի մասին, որը, մոտ լինելով մեծ ռազմավարությանը, այնուամենայնիվ, որոշակի տարբերություններ ունի դրանից: «Ճիշտ այնպես, ինչպես մարտավարությունն է հանդիսանում ռազմավարության կիրառումը ստորին մակարդակում, այդպես էլ ռազմավարությունն է հանդիսանում «մեծ ռազմավարու-

թյան» (*grand strategy*) ստորին մակարդակը: Գործնականում հանդիսանալով քաղաքականության (որը ղեկավարում է պատերազմի վարումը) հոմանիշը և տարբերվելով առավել հիմնարար քաղաքականությունից, որը կառավարում է պատերազմի խնդիրները, «գրանդ ռազմավարություն» եզրն օգտագործվում է «գործող քաղաքականության» (*policy in execution*) նշանակությունն արտահայտելու համար: Մեծ ռազմավարության համար «բարձրագույն ռազմավարությունը» ազգի կամ ազգերի խմբի բոլոր ռեսուրսների կոորդինացումն է պատերազմի քաղաքական նպատակներին (նպատակներ, որոնք որոշվում են հիմնարար քաղաքականության կողմից) հասնելու համար» [17, p. 335]: Այնուհետև Հարթն ասում է. «Մեծ ռազմավարությունը պետք է հաշվառի և զարգացնի ազգի տնտեսական և մարդկային ռեսուրսները՝ մարտական ծառայություններն ապահովելու նպատակով: Բարոյական ռեսուրսները, ժողովրդի մարտական ոգին բարձրացնելը հաճախ նույնքան կարևոր են, որքան ուժերի որոշակի ձևերի տիրապետելը: Մեծ ռազմավարությունը կարգավորում է նաև ուժերի բաշխվածությունը ծառայությունների և ծառայությունների ու տնտեսության միջև:

Ավելին, ռազմական ուժը մեծ ռազմավարության ընդամենը մի գործիքն է: Անհրաժեշտ է ուշադրության առնել և կիրառել ֆինանսական ճնշման, դիվանագիտական ճնշման, առևտրային ճնշման և ոչ վերջին հերթին՝ էթիկական ճնշման ուժը՝ հակառակորդի կամքը կոտրելու համար...

Բացի այդ, այն դեպքում, երբ ռազմավարության հորիզոնները սահմանափակվում են պատերազմով, մեծ ռազմավարությունը պատերազմից հեռու՝ հաջորդող աշխարհին է հայացքն ուղղում: Այն ոչ միայն պետք է համակցի զանազան գործիքներ, այլև կարգավորի դրանց կիրառումը, որպեսզի խուսափի աշխարհի ապագա կացությանը, նրա անվտանգությանն ու բարգավաճմանը վնաս հասցնելուց: Երկու կողմերի համար էլ վատ աշխարհը, որ կարող է հանգեցնել նոր պատերազմների, կարող է բացատրվել այն փաստով, որ ի տարբերություն ռազմավարության՝ մեծ ռազմավարության ոլորտը մեծ մասով *terra incognita* է, որն սպասում է հետազոտության և ընկալման» [17, p. 322]:

Չնայած եզրաբանության տարբերություններին, Հարթի տեսակետը շատ մոտ է արդի դոկտրիններին: Նրա մտցրած եզրերն ու հասկացությունները դառնում են ռազմավարության նկատմամբ սեփական մոտեցման (որը հայտնի է որպես անուղղակի մոտեցում) մշակման միջոց: Ռազմավարությունը, ի տարբերություն բնությունից, չի կարող հաղթահարել դիմադրությունը: Նրա նպատակն է նվազեցնել դիմադրության հավանականությունը, և այն հասնում է այդ նպատակի իրականացմանը շարժման և հանկարծակիության տարրերի կիրառման միջոցով...

Թեև ռազմավարությունը կարող է փորձել ավելի շուտ օգտագործել շարժումը, քան հանկարծակիությունը և հակառակը, այնուամենայնիվ, երկու տարրերն էլ միմյանց հետ փոխգործակցում են: Շարժումը առաջ է բերում հանկարծակիություն, իսկ հանկարծակիությունը սրընթացություն է հաղորդում շարժմանը» [17, p. 337]:

Ինչպես ռազմական միջոցներն են հանդիսանում մեծ ռազմավարության միջոցներից միայն մեկը՝ գործիքներից մեկը վիրաբույժի պայուսակում, այնպես էլ ճակատամարտը միջոցներից միայն մեկն է, որ կիրառվում է ռազմավարության նպատակներին հասնելու համար: Երբ կան հարմար պայմաններ, դա առավել արագ ճանապարհն է, բայց երբ պայմաններն անբարենպաստ են, ճակատամարտին դիմելը հիմարություն է...

Նրա (ռազմական ստրատեգիստի) պատասխանատվությունը առավել շահավետ իրադրությունում (ռազմական որոշման) ընտրության մեջ է՝ առավել նպաստավոր արդյունքներ ստանալու նպատակով: Այսպիսով, իսկական նպատակը ոչ այնքան ճակատամարտն ընտրելն է, որքան այնքան շահավետ ռազմավարական իրադրության ստեղծումը, որպեսզի եթե այն նույնիսկ չհանգեցնի էլ լուծման, ապա նրա շարունակությունը ճակատամարտի ձևով միանշանակորեն թույլ կտա հասնել դրան: Այլ խոսքերով՝ տարատեղումը (դիսլոկացիան) ռազմավարության նպատակն է» [17, p. 339]:

Հանկարծակիությունը և դրան հաջորդող իրարանցումային վիճակը ստեղծվում են կամ ուղղակի ազդեցությամբ՝ հակառակորդին ճակատի գիծը փոխել հարկադրելու, կամ նրա ուժերին, հաղորդակցային գծերին սպառնալու միջոցով: Դրան կարելի է հասնել նաև հակառակորդի քաղաքական գործիչների և զինված ուժերի հրամկազմի վրա ազդելու հոգեբանական մեթոդներով. «Ֆիզիկական ասպեկտները հետազոտելիս մենք չպետք է անուշադրության մատնենք հոգեբանականները, և միայն այդ երկուսի համակցումն է թույլ տալիս հասնել իսկապես անուղղակի մոտեցման ռազմավարության, որ կիրառվում է հակառակորդի հավասարակշռությունը խախտելու համար» [17, pp. 340-341]: Հարթի այս պնդումը նման է Կլաուզևիցի հետևյալ մոտեցմանը. «Երբ մենք խոսում ենք ախտյան զինված ուժերը ոչնչացնելու մասին, մենք դա համառորեն ընդգծում ենք, մեզ ոչինչ չի պարտավորեցնում սահմանափակել այդ հասկացությունը միայն նյութական ուժերով. մենք նկատի ունենք նաև բարոյական ուժերը, քանզի բարոյական և ֆիզիկական ուժերը սերտագույն կերպով կապված են և անբաժան են մեկը մյուսից» [10, p. 69]:

Հարթի անուղղակի մոտեցումը մեծ տարածում ունի արդի ստրատեգիստների շրջանում, իսկ որոշ շրջանակներում այն դոգմայի ուժ է ձեռք բերել: Այնուամենայնիվ, դրա մեկուսի կիրառումը հիմնախնդիրների մի

ամբողջ շարք է ստեղծում: Անուղղակի մոտեցումը մարտավարական գործիք է, որի կարգավիճակը բարձրացվել է մինչև ռազմավարականի: Ակնհայտ է, որ այսպիսի անցման գործընթացում հայեցակարգը կորցնում է մի քանի որակներ, և նրա լեգիտիմությունը լրացուցիչ հիմնավորում է պահանջում: Իրական աշխարհում ուղղակի մոտեցումը հաճախ առավել մեծ առավելություն է ապահովում, քան անուղղակին, հատկապես եթե հաջողվում է ապահովել որակյալ ռազմական գերազանցություն հակառակորդի ուժերի նկատմամբ:

Անուղղակի մոտեցման ռազմավարության առավելությունը հանկարծակիության, հոգեբանական խառնաշփոթի էֆեկտի մեջ է և դրան հաջորդող հաղթանակի ձեռքբերումն է՝ առանց հակառակորդի հետ ուղղակի բախման մեջ մտնելու: Այս առումով անուղղակի մոտեցումը նման է Սուն Ցզիի փիլիսոփայությանը: Կասկած չի հարուցում այն, որ իրարանցումը և հանկարծակիության էֆեկտը մեծ առավելություն են ապահովում հարձակվող կողմի համար: Սակայն, միևնույն ժամանակ, հարց է առաջանում, թե ինչպես և ինչ նպատակների համար է օգտագործվում ձեռք բերված առավելությունը, ինչպես է հարձակվող կողմը տնօրինում նվաճված էֆեկտը, որը, ըստ սահմանման, կրում է ժամանակավոր բնույթ: Եվ այս իմաստով անուղղակի մոտեցումն ամբողջական չի թվում և պահանջում է ռազմավարական գործիքանու լրացում ուղղակի մոտեցումներով, որոնք հիմնված են ռազմական ուժի կիրառման վրա [11, pp. 87-88]:

Ռազմավարությունն ըստ Հովարդի. Մայքլ Հովարդի (*Michael Howard*) ռազմավարական պարադիգմը կառուցվում է զարհուրեցնելու, հարկադրելու և համոզելու (*reassurance*) հիման վրա. «Համոզելն ապահովում է անվտանգության ընդհանուր ընկալումը, ինչը յուրահաստուկ չէ որևէ սպառնալիքի կամ սցենարի համար»: Պարադիգմի շրջանակներում առաջարկվում է ռազմական ուժն օգտագործել այդ թվում և այլ պետություններին վախեցնելու համար՝ հարկադրելով նրանց հրաժարվել ցանկացած քայլի դիմելուց կամ մի այլ բան ձեռնարկելուց: Հովարդի ռազմավարությունն առաջարկում է մի միջոց, որի օգնությամբ ռազմական ուժը կարող է փոխակերպվել կայուն և տևական խաղաղության: Դրա հաջող կիրառման օրինակ է բրիտանական խաղաղությունը, երբ Մեծ Բրիտանիայի ռազմածովային նավատորմի՝ ծովերի նկատմամբ վերահսկողությունն ապահովում էր գլոբալ անվտանգությունը, որը փոխակերպվում էր ընդհանուր խաղաղության [18, p. 165]:

Ռազմավարությունն ըստ Լյութվակի. Էդվարդ Լյութվակը (*Edward Luttwack*) ռազմավարության ձև է համարում ուժասպառ անելը և մանրը: Հակառակորդին ուժասպառ անելը սեփական հրազենային հզորության և նյութական ռեսուրսների առավելության օգտագործումն է հակառակորդի զինված ուժերը ոչնչացնելու նպատակով, անկախ նրանից՝ նահանջն ւմ է նա, թե՞ անձնատուր է լինում: Հակառակորդը ոչ այլ ինչ է, եթե ոչ թիրախների բազմություն, որոնք պետք է ոչնչացվեն տրամադրության տակ եղած սպառազինության համակարգերով: Որպես ուժասպառելու հակոտնյա հանդես է գալիս հարաբերական մանրը՝ «գործողություն, որ համապատասխանում է նպատակի առանձնահատկություններին»: Հարաբերական մանրի սկզբնական դիրքորոշումը մինչև հակառակորդի թույլ կողմերը (ֆիզիկական, հոգեբանական կամ կազմակերպական) բացահայտելը նրա ուժերի հետ ուղղակի բախումից խուսափելն է՝ նպատակ ունենալով շարքից հանել հակառակորդի համակարգերը: Դրանք կարող են լինել հրամանատարական և կառավարման համակարգերը, գործող բանակը կամ նույնիսկ ռազմական դոկտրինը: Մի շարք դեպքերում հարձակման կարող են ենթարկվել հակառակորդի տեխնիկական համակարգերը [19, pp. 92-94]:

Լյութվակը հասկանում է, որ ռազմավարության երկու ձևերն էլ պետք է օգտագործվեն՝ մեկի կամ մյուսի գերակայությամբ, կախված կոնկրետ իրավիճակից: Առավել դժվար է իրականացնել հարաբերական մանրը, քան ուժասպառ անելը, և առաջինը կարող է ամբողջովին խափանվել, եթե այն իրականացնող ուժերը չափազանց թույլ են խնդրից գլուխ հանելու համար, կամ էլ հանդիպում են անսպասելի դիմադրության: Հարաբերական մանրը չի ընդունում «որակի ազատ փոխարինում քանակով» մաքսիմը, երբ որակի բացակայության դեպքում առաջադրված նպատակները ձեռք են բերվում ռազմական հզորության քանակական ցուցանիշների աճման հաշվին: Քանի դեռ զինված ուժերը չեն հասել անվտանգության, հրազենային հզորության, մարտական վարժվածության ինչ-որ հիմնային մակարդակի, հարաբերական մանրի ռազմավարությունը լի է անկանխատեսելի հետևանքներով:

Լյութվակի խոսքերով՝ ռազմավարությունը պարադոքսային է. «Այստեղ առաջարկվող պնդումն այն է, որ ռազմավարությունն առաջ է բերում ոչ թե պարզապես այս կամ այն պարադոքսային առաջարկությունը՝ հակասական, բայցն ընդունելի՝ որպես հիմնավորված: Այն ավելի շուտ խոսում է այն մասին, որ ռազմավարության ողջ ոլորտը ինքնըստինքյան համակված է պարադոքսային տրամաբանությամբ, որը հակասության մեջ է մտնում սովորական գծային տրամաբանության հետ, որով մենք ապրում են կյանքի մյուս բոլոր ոլորտներում (բացի պատերազմին նման խաղերից)» [19, p. 4]:

Ռազմավարության պարադոքսային տրամաբանությունն ընդգրկում է պատերազմի 5 մակարդակ՝ տեխնիկական, մարտավարական, գործառնական, ռազմավարական (ռազմական գործողությունների թատերաբեմ) և մեծ ռազմավարության, ինչպես նաև 2 չափում՝ հորիզոնական (մակարդակներից յուրաքանչյուրի ներսում) և ուղղահայաց (մակարդակի միջով): Ճանապարհների ընտրության պարզ օրինակով Լյութվակը ցույց է տալիս բնականոն և պարադոքսային տրամաբանությունների տարբերությունը: Սովորական մարդկային գործունեության մեջ դուք, անշուշտ, կընտրեք որակյալ ճանապարհը: Սակայն «միայն ռազմավարության կոնֆլիկտային ոլորտում ընտրությունը կարող է տեղ ունենալ և միայն մարտի պայմաններում է հնարավոր, որ վատ ճանապարհը լավը համարվի հենց այն պատճառով, որ վատն է, ուստի պակաս ուժով է պահպանվում կամ նույնիսկ հակառակորդի կողմից թողնվում է առանց պաշտպանության»՝ դրանով իսկ ապահովելով առավելությունը, որը պատերազմի բնույթի հետևանքն է:

Ինչպես և Կլաուզիցը, Լյութվակը հավատարիմ է մնում ռազմական հակամարտությանն ու պատերազմի մրցակցային ասպեկտին, որը հանգեցնում է պատերազմի պարադոքսայնությանը. «... անհարմար ժամանակին կամ ուղղությանը, ակնհայտ և միտումնավոր չավարտված, չափազանց վտանգավոր թվացող նախապատրաստություններին, գիշերային մարտին կամ վատ եղանակին պարադոքսային նախապատվություն տալը մարտավարական վարպետության ընդհանուր ասպեկտն է՝ ելնելով պատերազմի անքակտելի էությունից բխող պատճառներից» [19, p. 7]:

Պարադոքսային վարքագիծը կարող է ընտրվել նրա համար, որպեսզի ապահովվի հանկարծակիությունը և ձեռք բերվի առավելություն մարտում. «Պարադոքսային ընտրության ցանկացած ձև կարող է ընդունելի համարվել հակառակորդի հանդեպ առավելության հասնելու համար, որն ի վիճակի չէ հակադարձել, քանի որ նրան հանկարծակիի են բերել, և նա պատրաստ չէ կամ առնվազն չի կարող համարժեք և ամբողջ ուժով հակահարված տալ...

Հանկարծակիությունն այժմ կարող է ճանաչվել այն, ինչ կա. ոչ թե պատերազմում առավելության բազմաթիվ գործոններից մեկը, այլ ավելի շուտ ռազմավարության ողջ կարգի կախյալ վիճակ, թեկուզ և ընդամենը կարճ ժամանակով և մասամբ ու նույնիսկ շարունակվող պայքարի պարագայում: Առանց հակահարված տվող հակառակորդի, ավելի ճիշտ՝ համաձայն ձեռք բերված հանկարծակիության տեսկանության և աստիճանի, պատերազմի վարումը պարզապես վարչարարություն է դառնում» [19, p. 8]:

Հանկարծակիության ապահովումն, այսպիսով, դառնում է ռազմավարության և նույնիսկ ռազմավարական գիտության մի ամբողջ ուղղության

առանցքային տարրերից մեկը: Ակնհայտ է, որ պարադոքսային ընտրությունը, թույլ տալով հասնել հանկարծակիության, ունի իր սահմանները և երբեք բացարձակ առումով հուսալի չէ: Բացի այդ, «հանկարծակիության հասնելու նպատակ ունեցող պարադոքսային ընտրությունը պետք է ունենա իր գինը, որն արտահայտվում է ներուժի (ուժեր և միջոցներ) որոշ կորստի ձևով, որը հակառակ պարագայում կպահպանվեր»: Այն առավել հաճախ դժվարացնում է մարտական գործողությունների վարումը. օրինակ՝ անհամեմատ դժվար է գիշերային մարտ վարելը: Ծայրահեղ դեպքերում պարադոքսային ընտրության ապահովման և հանկարծակիության հասնելու համար գործադրված ջանքերը ուժերի ու ռեսուրսների այնպիսի ծախսերի են բերում, որ դրանք այլևս չեն բավականացնում գլխավոր ճակատամարտի համար [19, pp. 9-10]: «Ակնհայտ է, որ «ամենավորք սպասման» պարադոքսային գիծը պետք է զերծ լինի ինքնակործանարար ծայրահեղություններից, քանի որ, ամեն ինչից բացի, որոշումը անվտանգության և ճշգրտության համար պատասխան չտվող հաշվարկների արդյունք է: Թեև պոտենցիալ առումով ուժերի և միջոցների հնարավոր կորուստն անկասկած է, հանկարծակիությամբ նվաճված հաջողությունը միայն ենթադրվում է, և եթե արժեքը սովորաբար կարող է ճիշտ հաշվվել, ապա շահը, քանի դեռ գործը չի ավարտվել, շահարկումների առարկա կմնա» [19, p. 10]:

Պատկերը բարդանում է անհամաձայնությամբ, որը Լյութվակն անվանում է կազմակերպական ռիսկ: Բացի այդ, պարադոքսային գործողությունները հակառակորդի համար կարող են կանխատեսելի լինել՝ զրոյի հավասարեցնելով հանկարծակիության էֆեկտը:

Հնարավոր են նաև այնպիսի իրավիճակներ, երբ ուղիղ տրամաբանական որոշումներն առավել ընդունելի են: «Եթե հակառակորդն այնքան է թուլացել, որ նրա ուժերը կարող են դիտարկվել որպես թիրախների պասիվ բազմություն, որոնք միևնույն ժամանակ նաև զրկվել են շարժունակությունից, արդյունաբերական արտադրության բնականոն տրամաբանությունը, արտադրական արդյունավետության բոլոր չափանիշներով հանդերձ, դառնում է միանգամայն հիմնավորված, իսկ ռազմավարության պարադոքսային տրամաբանությունը՝ անտեղի» [19, pp. 10-15, 17]:

Ակնհայտ է, որ Լյութվակի ռազմավարությունն ունի իր սահմանները և չի կարող հավակնել պատերազմի ընդհանուր տեսության դերին: Պատերազմի և ռազմական տրամաբանության նույն այդ պարադոքսայությունը կարող է դիտարկվել որպես ռազմական տրամաբանության և միանգամայն տրամաբանական ռազմական վարքագծի տարր, այսինքն՝ ընդհանրացման փորձերը մեզ հանգեցնում են հակասության և ինքնաժխտման՝ դրանով իսկ հստակ գծելով ռազմավարության տվյալ ձևի կիրառելիության սահմանները:

Ռազմավարությունն ըստ վան Կրևելդի. Մարտին վան Կրևելդի (*Martin van Creveld*) «Պատերազմի փոխակերպումը» մենագրությունը, համաձայն շապիկի վրա գետեղված համառոտագրի, «Կլաուզևիցի ժամանակներից սկսած ռազմական հակամարտության ամենաարմատական վերամեկնաբանությունն է»: Կրևելդը պատկանում է ռազմական այն տեսաբանների շարքին, ովքեր Կլաուզևիցի տեսությունը հնացած են համարում, որը թույլ չի տալիս բացատրել, թե ով, ինչպես և երբ է պատերազմ վարում արդի դարաշրջանում: Ըստ Կրևելդի՝ պատերազմն այլևս պետության ռացիոնալ քաղաքական ակտ չի հանդիսանում: Ավելին, մեծ տարակուսանք է արտահայտվում, թե այն երբևէ եղել է այդպիսին: Պատերազմներն այլևս չեն մղվում սովորական նպատակների համար, որոնց մենք հավատում ենք, և դրանք չեն վարվում դասական պատերազմների համար սովորական և բոլորի համար ընդունելի կանոններով [20, p. ix]: Արդի պատերազմն ընդունում է զանազան ձևեր, և Կլաուզևիցի եռամիասնության ձևը ընդամենը դրանցից մեկն է, ընդ որում՝ ոչ գերիշխողը:

Ըստ Կրևելդի՝ 1991 թվականից և «փոքր ինտենսիվության հակամարտությունների» վերածննդից սկսած՝ աշխարհում գերիշխում են ոչ պետական ակտորների միջև հակամարտությունները. «Մենք մտնում ենք ոչ թե առևտրային բլոկների միջև խաղաղ տնտեսական մրցակցության, այլ էթնիկական և կրոնական խմբերի միջև պատերազմի դարաշրջան»: Պրոֆեսիոնալ զինվորականները, նրանց փորձն ու հմտությունը դառնում են անհամարժեք նոր պայմաններին ու խնդիրներին, որոնք նրանք պետք է լուծեն: Պետությունների համար փոփոխված աշխարհում անհրաժեշտ է դառնում համապատասխան զինված ուժեր ստեղծելը, այլապես նրանց սպառնում է աշխարհի քաղաքական քարտեզից վերանալու փորձությունը [20, p. ix, 57]:

Հակամարտության բնույթը թելադրում է պայքարի մասնակիցների շարժառիթները և նպատակները: Քանի որ դրանք ոչ պետական ակտորներ են, ուրեմն դրանց նպատակները չեն ենթարկվում տրամաբանական բացատրության և հենվում են քաղաքական հարթության համար այնպիսի վերացական հասկացությունների, ինչպիսիք են արդարությունը, կրոնը և այլն: Նման վարքագծի դրդապատճառները կրում են անհատական բնույթ և ավանդական վերլուծության չեն ենթարկվում: Որպես հետևանք՝ պետության կողմից ազդեցության սովորական մեթոդները դառնում են անհամարժեք և առաջ են բերում անսպասելի հակազդեցություն, որը բավական դժվար է հաշվարկել և կանխատեսել պատերազմի դասական ընկալման շրջանակներում [20, pp. 125-156]: Կրևելդը պնդում է, որ Կլաուզևիցը չէր հասկանում, թե ինչպես է վարվում պատերազմը և նրա՝ համընդհանրության հակումը սխալ էր, քանի որ միջազգային իրավունքը, կոնվենցիանե-

րը, մի շարք այլ գործոններ սահմանափակում են միջպետական հակամարտությունները թույլ չտալով, որպեսզի դրանք համընդհանուր (տոտալ) բնույթ ձեռք բերեն:

Առավել հետաքրքրական է Կրևելդի մոտեցումը ռազմավարությանը: Ինչպես և Լյութվակը, վան Կրևելդը ռազմավարությունը պարադոքսալին է համարում: Եթե պատերազմի նպատակը հակառակորդի գործերի ոչնչացումն է, ապա մենք պետք է օգտագործենք մանևրը, որպեսզի բացահայտենք նրա թույլ տեղերը: Քանի որ պատերազմը մրցություն է, ապա հակառակորդը ձեռնարկում է համանման քայլեր, և մեր խնդիրն է պաշտպանել սեփական թույլ տեղերը հակառակորդի հարվածներից: Դրանով իսկ ռազմավարության բուն էությունը դառնում է «... (հակառակորդի) ուշադրությունը շեղելու ընդունակությունը, խաբելը և մոլորության մեջ գցելը»: Ակնհայտ է, որ նման ռազմավարությամբ չափից ավելի տարվելու դեպքում դժվար է դառնում տարբերելը, թե որտեղ են կայանում հակառակորդին խաբելն ու մոլորեցնելը և որտեղ են ծավալվում հիմնական ճիգերը:

Վան Կրևելդը խոսում է մի քանի պարադոքսների, ներառյալ նաև ժամանակի ու տարածության պարադոքսի մասին: Նա օգտագործում է նույն փաստարկները, ինչ և Լյութվակը, երբ ասում է, որ երկու կետերի միջև ամենակարճ հեռավորությունը միշտ չէ, որ ուղիղ գիծն է: Մյուս պարադոքսը կապված է ուժերի կենտրոնացման և դրանց ապակենտրոնացման միջև փոխհարաբերությունների հետ: Կենտրոնացումը, որն անհրաժեշտ է գլխավոր ուղղության վրա առավելության հասնելու համար, բարձրացնում է մտահոլացման ժամանակից շուտ բացահայտման հնարավորությունը: Եվ վերջապես, արդյունավետության և գործունեության (*effectiveness and efficiency*) պարադոքսը, երբ ավելի խնայողական, արդիականացված ռազմական կազմակերպությունը կարող է առավել խոցելի լինել [20, pp. 63-94, 119, 120-220]:

Հավանական է, որ սա եզակի դեպք է ռազմավարական մտքի պատմության մեջ, բայց Կրևելդը ավելի ուշ սկսեց քննադատել իր մոտեցումները: 2003թ. հրապարակված մենագրության նոր խմբագրության մեջ նա գալիս է այն եզրակացության, որ ոչ ավանդական պատերազմների կշիռը շարունակում է ավելանալ, և «Պատերազմի փոխակերպման» գլխավոր թեզիսը, թե մեծ պետությունների միջև ռազմական հակամարտություններն աստիճանաբար մարում են, հաստատվում է գրքի հրատարակումից հետո անցած տասը տարիների ընթացքում, և որ «կանխատեսումը, թե պատմությունը վկայում է պատերազմի եռամիասնության հայեցակարգի վրա հիմնված պատերազմներից դեպի այլ պատերազմներ մեծ տեղաշարժի մասին, հաստատվել և շարունակում է հաստատվել գրեթե ամեն օր» [21, p. 5]: Այնուամենայնիվ, Կրևելդը ստիպված է հաստատել, որ կոնվենցիոնալ պատե-

րազմները շարունակում են մնալ արդիական, և պատմության ասպարեզից դրանց հեռանալու հայտանիշներ չկան [21, pp. 7-14]:

Ռազմավարությունն ըստ Գրեյի. Արդի ստրատեգիստ Քոլին Գրեյը տալիս է ռազմավարության հետևյալ սահմանումը. «Ռազմավարություն ասելով ես հասկանում եմ *ուժի կիրառման եղանակը և ուժի կիրառման սպառնալիքը քաղաքականության նպատակներով*» (ընդգծ. բնագրում) [22, p. 17]: Գրեյի ձևակերպման մեջ որոշիչ դերը հատկացվում է ռազմական բաղադրիչին կամ պատերազմական ժամանակի ռազմավարությանը:

Գրեյը պնդում է, որ պատերազմը, բարդ երևույթ լինելով, պահանջում է լուծման նույն բարդությամբ մեթոդների մշակում և կիրառում: Ի հետևանք՝ Գրեյի ռազմավարությունը տիրապետում է առնվազն 17 չափանշումների: Կարևորն այն է, որ դրանք «մեկ ամբողջի բնորոշ չափանշումներ են... որոնք փոխազդում են մեկը մյուսի վրա»: Չափանշումները խմբավորվում են ըստ երեք մեծ կարգերի. ժողովուրդ և քաղաքականություն, պատերազմի պատրաստություն և պատերազմի վարում: Հիմնական չափանշումները սահմանելուց հետո Գրեյը տալիս է հետևյալ հարցը, թե ինչպես են դրանք փոխգործակցում միմյանց հետ՝ դրանով իսկ վերջնականապես հաստատելով պատերազմի մասին ամբողջական և ոչգծային մոտեցումը, որտեղ վճռական դերը հատկացվում է մարդկային ակտիվությանը: Պատերազմը և ռազմավարությունը հավերժ են, ինչպես հավերժ է մարդկային էությունը, և շատ ավելի վերացական են, քան ընդունված է կարծել, քանի որ ներառում են այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են ինտուիցիան, կոգնիցիան, մշակույթը և նույնիսկ մետաֆիզիկան [22, pp. 24-43]:

Պատերազմին և ռազմավարությանը խոլիստիկ մոտեցումը դիտվում է խիստ կարևոր, քանի որ դրա հետևանք է դառնում տեղեկատվության անընդմեջ փոխանակման պահանջը, որը որոշում է փոխգործակցության բնույթը ինչպես ռազմավարական չափանշումների միջև, այնպես էլ համակարգում ընդհանրապես: Բացի այդ, տեղեկատվական հոսքերը թույլ են տալիս ճանաչել նոր երևույթների էությունը և համապատասխան ձևով համապատասխանեցնել գործողության պլանը՝ դրանով իսկ նվազեցնելով պատերազմի անհամաձայնությունն ու մշուշը և պահպանելով համարժեքությունն անընդհատ փոփոխվող ռազմական իրողությանը:

Ռազմավարության նկատմամբ ընդհանրացված մոտեցման փորձեր. ԱՄՆ զինվորական շրջանակներում միավորված ռազմավարությունը սահմանվում է որպես ազգային հզորության գործիքների՝ «համաժամանակյա և ինտեգրված ձևով մշակման և կիրառման արվեստ և գիտություն՝ ռազմա-

կան գործողությունների թատերաբեմի (ՌԳԹ) նպատակներին, ազգային և/կամ բազմազգային նպատակներին հասնելու համար» [23, pp. 357, 507]: Մահմանման համաձայն՝ ռազմավարությունը դիտարկվում է որպես ազգային անվտանգության գործառույթ և չափից ավելի ընդարձակ է:

Միավորված օն-լայն հանրագիտարանում տրվում է հետևյալ սահմանումը. «Այդ ռազմավարությունները ինտեգրում են ազգային և ռազմական խնդիրները (նպատակները), ազգային քաղաքականությունը և ռազմական հայեցակարգերը (եղանակները, ուղիները, մեթոդները), ինչպես նաև ազգային ռեսուրսները, զինված ուժերը և ապահովման ձևերը (միջոցները)» [24, pp. 542, 731]: Այն կենտրոնանում է նաև ազգային անվտանգության վրա և այն մոտեցման օրինակն է, որը դիտարկում է ռազմավարության գործիքային ասպեկտները. ինչպես, ինչ ձևով... են նվաճվում ռազմավարական նպատակները: Ընդ որում՝ մենք, լավագույն դեպքում, ունենք հարաբերակցություն նպատակների և դրանց ձեռքբերման միջև: Սահմանումը չի դիտարկում այն հարցը, թե ինչ ռազմական նպատակների միջոցով է ենթադրվում հասնել ազգային նպատակներին, իսկ հանրագիտարանը հղում է կատարում «Ազգային ռազմական ստրատեգիա» (*National Military Strategy*) տեսական փաստաթղթին:

ԱՄՆ բանակի ռազմական քոլեջը (*U.S. Army War College*) տալիս է ռազմավարության երկու սահմանում: Առաջին. «Հայեցակարգային առումով ռազմավարությունը մենք սահմանում ենք որպես փոխհարաբերություններ նպատակների, եղանակների (ուղիների, մեթոդների) և միջոցների միջև» [25, p. 11]: Եվ երկրորդ, որն ավելի ընդարձակ է և մոտ մեծ ռազմավարության սահմանմանը. «Նպատակների (խնդիրների), գործողությունների եղանակների (ուղիների, մեթոդների) և միջոցների (ապահովող ռեսուրսների) հմուտ ձևակերպում, կոորդինացում և կիրառում՝ ազգային շահերի ամրապնդման և պաշտպանության համար» [26, p. 205]:

«Ռազմավարության և ազգային անվտանգության հրահանգի» հեղինակները տալիս են ռազմավարության վերաբերյալ սեփական մոտեցումը. «... ռազմավարությունը հիմնախնդրի լուծման գործընթաց է: Այն մոտեցման ընդհանուր և տրամաբանական եղանակ (ուղի, մեթոդ) է ցանկացած հիմնախնդրի նկատմամբ՝ ռազմական, ազգային, անձնական, առևտրային, թե ցանկացած այլ կարգի: Ռազմավարությունն առաջադրում է մի քանի հիմնային հարցեր. ի՞նչ է սա, ի՞նչ եմ ուզում անել, ի՞նչ ունեմ ես կամ ի՞նչ կարող եմ ես օգտագործել ընդունելի սահմաններում, որպեսզի անեմ այն, ինչ ուզում եմ անել, և ո՞րն է այն բանի օգտագործման լավագույն եղանակը (ուղին, մեթոդը), ինչ ես ունեմ, որպեսզի անեմ այն, ինչ ուզում եմ անել» [11, p. 81]:

Այս մոտեցումը բավական մոտ է ԱՄՆ բանակի ռազմական քոլեջի

սահմանմանը, որը ռազմավարությունը դիտարկում է որպես փոխհարաբերություններ նպատակների, եղանակների (ուղիների) և միջոցների միջև:

Ռազմավարությունը որպես գործընթաց. «նպատակներ-եղանակներ-միջոցներ» (ends-ways-means) պարադիգմի վերլուծությունը. «Ռազմավարության կայացումը. կառավարողները, պետությունները և պատերազմը» (*Making of Strategy: Rulers, States, and War*) ժողովածուի ներածությունում հեղինակները ռազմավարությունը դիտարկում են որպես «... մշտապես հարմարվելու գործընթաց աշխարհում փոփոխվող պայմաններին և իրադրությանը, որում գերիշխում են պատահականությունը, անորոշությունը և երկիմաստությունը» [27, pp. 80-81]:

Ռազմավարությանը որպես գործընթացի, «նպատակների և միջոցների միջև փոխհարաբերությունների» ուղու, մեթոդի մոտեցումը նոր չէ: Դրա կողմնակիցներն էին այնպիսի ստրատեգիստներ, ինչպիսիք են Ժոն Գրա և Հարթը: Ռազմավարության նկատմամբ նման վերաբերմունքը պաշտպանում են ՌԳԹ հրամանատարները, գործողությունների պլաններ մշակողները և դրված նպատակներին հասնելու համար գոյություն ունեցող միջոցներն օպտիմալ բաշխելու խնդիրը լուծողները:

«Նպատակներ-եղանակներ-միջոցներ» (*ends-ways-means*) պարադիգմը թույլ է տալիս խուսափել երկու հասկացությունների՝ գիտական արտադրանք և գիտական գործընթաց, իրար խառնելուց: Դասական ռազմավարությունը որպես բնական գիտությունների նման մի ինչ-որ բան դիտարկելու, ռազմավարության սկզբունքներն ու հստակ գիտական օրենքները գտնելու փորձերը միշտ անհաջողության են մատնվել: Պարադիգմը թույլ է տալիս հասնել այն բանի ընդհանուր ըմբռնմանը, որ ռազմավարության գծով հետազոտությունները չեն կարող ձևակերպվել որպես գիտական արտադրանք: Եվ մինևույն ժամանակ, այն ապահովում է փաստերին և իրադարձություններին համակարգային մոտեցման շրջանակն ու հնարավորությունը և թույլ է տալիս ռազմավարությունը դիտարկել որպես գիտական գործընթաց [6, p. 115]:

Շովակալ Ուայլին ասում է. «Ես չեմ պնդում, թե ռազմավարությունը է կամ կարող է դառնալ «գիտություն» բնական գիտությունների իմաստով: Այն կարող է և պետք է լինի բարձրագույն կարգի մտավոր գիտաճյուղ, և ստրատեգիստը պետք է պատրաստի իրեն գաղափարների հետ ճշգրիտ, հստակ և ստեղծագործական երևակայությամբ վարվելու համար: Ուստի, թեև ռազմավարությունն ինքը գիտություն չէ, բայց ռազմավարական դատողությունը կարող է լինել գիտական, քանի որ այն կարգավորված է, ռացիոնալ, օբյեկտիվ, համընդգրկուն, ընտրողական և խորաթափանց» [28, p. 10]:

«Նպատակներ-եղանակներ-միջոցներ» պարադիգմի սահմանափակումների ընկալումը, փակելով շրջանը, մեզ բերում է ռազմավարության ընկալմանը՝ որպես նպատակների, եղանակների և միջոցների միջև օպտիմալ հարաբերակցությունը գտնելու արվեստ: Ակնհայտ է, որ ռազմավարությունը միշտ չէ, որ մնում է տվյալ շրջանակի սահմաններում, հանդիսանալով, ըստ գերմանական ցամաքային զորքերի 1936թ. դաշտային կանոնադրության (*German Army Regulations Truppenfuhrung 1936*), «ազատ ստեղծագործ ակտիվություն, որ հենվում է գիտական հիմքերին» [29, p. 41]:

Վերը դիտարկված ռազմավարական տեսություններից և հայեցակարգերից ուր կարելի է համարել ամենալավը: Ակնհայտ է, որ պատասխանը մեկն է. դրանցից և ոչ մեկը: Ռազմավարությունը չի ընդունում լավագույնի և ունիվերսալ լուծման կամ տեսության հասկացությունը, և ռազմավարական տեսություններից յուրաքանչյուրը, լինելով առավել օպտիմալն այս կամ այն յուրահատուկ պայմաններում, չի կարող հավակնել ռազմավարության ընդհանուր տեսության դերին: Այն չի կարելի դիտարկել նաև որպես արծաթե փամփուշտ կամ մոգական բանաձև, որը միանշանակորեն թույլ է տալիս հասնել հաղթանակի [5, p. 13]:

Այսպիսով, ստրատեգիստը պետք է ծանոթ լինի գոյություն ունեցող բոլոր հայեցակարգերին և դրանց վերաբերվի որպես իր գործիքանու: Դա թույլ կտա նրան ընտրել ստեղծված իրադրության համար օպտիմալ ռազմավարություն կամ համակցել մի քանի տեսություններ և մոտեցումներ՝ դրանով իսկ խուսափելով հին ասույթի սահմանափակումներից. «Եթե ձեռքիդ տակ միայն մուրճ է, ապա բոլոր հիմնախնդիրները մեխ են երևում» [11, pp. 102-103]: Այս աշխատանքում դիտարկվող տեսությունները և հայեցակարգերն ավելի շատ վերաբերում են պատերազմի ոլորտին ու պատերազմական ժամանակին և ոչ մեծ ռազմավարությանն ու ազգային անվտանգության հիմնահարցերին: Եվ նույնիսկ ռազմական մոտեցման շրջանակներում դրանք առաջին հերթին կենտրոնանում են հիմնախնդրի բազմաչափ վերլուծության ու լուծումների որոնման և ոչ թե «նպատակներ-ուղիներ-միջոցներ» պարադիգմի գործիքային մոտեցման վրա:

Հնարավոր ռազմավարության թեսթավորումը կարող է անցկացվել համապատասխանության, ընդունելիության և իրականանալիության (*suitability, acceptability, and feasibility*) չափանիշներով, որոնք թույլ են տալիս գնահատել «նպատակներ-եղանակներ-միջոցներ» պարադիգմի բաղադրիչները: Համապատասխանության չափանիշը նպաստում է գնահատելու այն, թե թույլ է տալիս, արդյոք, ընտրված ռազմավարությունը հասնել ցանկալի նպատակներին: Ընդունելիությունը գնահատում է նպատակին հասնելու եղանակները. թույլ են տալիս, արդյոք, առաջարկվող գործողությունները

արդյունքի հասնել առանց ռեսուրսների չափազանց մեծ ծախսերի և առկա հնարավորությունների սահմաններում: Իրականանալիությունը դիտարկում է նպատակներին հասնելու միջոցները. թո՞ւյլ են տալիս, արդյոք, առկա միջոցները, կառավարման մեթոդները և այլն իրականացնել առաջարկվող հայեցակարգը: Առաջարկվող ռազմավարական հայեցակարգերը պետք է դրական պատասխան տան բոլոր երեք հարցերին՝ դրանով իսկ ձևավորելով մոտեցումների և հնարավոր լուծումների որոշ բազմություն: Ռազմավարության արվեստը այդ բազմությունից առավել օպտիմալ լուծումն ընտրելու կարողության մեջ է [11, p. 82]:

Այս կամ այն ռազմավարության կիրառելիությունը գնահատելիս կարևոր դեր են ձեռք բերում ռազմավարության բարոյական և սոցիալական կողմերը: Այս կամ այն մշակույթի, ազգի և նույնիսկ անհատի համար այս կամ այն ռազմավարության բարոյական կողմը և լեգիտիմությունը կարող են կերպարվել լայն առումով: Քոլին Գրեյը ռազմավարության սոցիալական չափման մասին ասում է. «Ռազմավարությունը մշակվում և ի կատար է ածվում որոշակի հասարակությունների ինստիտուտների կողմից՝ մշակութային նախապատվություններն արտացոլող եղանակներով» [22, p. 28]: Ռազմավարությունը նաև պետք է բավարարի զինվորական միջավայրում, կառավարական շրջանակներում և ժողովրդի կողմից ընդունված նորմերը:

Ռազմավարության երկրնտրանքները. Պատերազմի ձևը փոխվելիս պետք է փոխվի՞, արդյոք, ռազմական ստրատեգիան: Եթե ռազմավարությունը նպատակի գործառույթ է, ապա քաղաքական նպատակի փոփոխության հետ այն նույնպես պետք է փոխվի: Սակայն կա նաև այլընտրանքային տեսակետ, որը ելնում է նրանից, որ հակառակորդի բանակի ջախջախումը պատերազմի և ռազմական ստրատեգիայի լավագույն (իսկ որոշ տեսաբանների համար՝ միակ) նպատակն է՝ անկախ քաղաքական նպատակներից: Այս երկրնտրանքն այն հիմնախնդրի արտացոլումն է, որը Կլաուզեֆցն իր ժամանակին անվանել է բարձրագույն դատողություն պատերազմի և նրա էության մասին. «Դատողության առաջին, ամենամեծ, ամենավճռական ակտը, որը բաժին է ընկնում պետական գործչին և գորահրամանատարին, այն է, որ նա նշված առումով պետք է ճիշտ ճանաչի նախաձեռնվող պատերազմը. նա չպետք է ընդունի այն որպես մի ինչ-որ բան, որը տվյալ հանգամանքներում լինել չի կարող, և չպետք է ձգտի անբնականորեն փոխել դա: Մա էլ հենց բոլոր ռազմավարական հարցերից առաջինն է, առավել համապարփակը...» [10, pp. 88-89]:

Հետաքրքրական է թվում իրականացվող ռազմավարության ձևակերպման և տեսակավորման կարևորության հարցը: Ակնհայտ է, որ պետությունը

կարող է իրեն թույլ տալ չունենալ հստակ ձևակերպված ռազմավարական նպատակներ ռազմական ոլորտում, ինչը երբեմն որոշ տարածություն է ապահովում մանրի համար՝ թույլ տալով խուսափել բացահայտ պատերազմից: Ակնհայտ է, որ խոսքը, փաստորեն, խուսափման քաղաքականության մասին է, որը, ըստ սահմանման, պաշտպանական է, ռեակտիվ և կարող է հաջող լինել բավական կարճ ժամանակի համար: Համանման մոտեցման փորձերը մեծ ռազմավարության, ազգային անվտանգության և ազգային շահերի ոլորտներում ավելի քան կասկածելի են թվում: Կայացած պետականությունը գիտակցում և հետապնդում է իր ռազմավարական նպատակները, տիրապետում է դրանց հասնելու ուղիներին ու եղանակներին և գիտե այն միջոցները, որոնք ունի այդ նպատակի համար: Եվ եթե ռազմավարությունը նույնիսկ ձևակերպված էլ չէ որպես տեսություն կամ հայեցակարգ, այնուամենայնիվ, կենսունակ պետության մեջ այն միշտ առկա է և իրականացվում է: Պրակտիկ քաղաքական գործիչների կողմից ռազմավարությունն անտեսելու փորձերը խարխուլում են քաղաքականության և ռազմական ոլորտի փոխհարաբերությունները, և «... քաղաքականությունը չի կարող պատերազմին ներկայացնել անիրականանալի պահանջներ. դա կհակասեր միանգամայն բնական և անհրաժեշտ այն նախադրյալին, թե նա գիտի այն միջոցը, որն ուզում է օգտագործել» [10, p. 433]:

Խորանալով տեսության մեջ՝ հարկ է հիշել, որ ռազմավարությունը, այնուամենայնիվ, պրակտիկ դիսցիպլին է: Որոշակի անջրպետ կա ռազմական տեսաբանների և գործող զինվորականների միջև, և ռազմավարական մտքի բոլոր նվաճումները կարող են անօգուտ լինել իրական մարտին մասնակցող հրամանատարի համար: Ըստ Կիկերոնի (*Cicero de Oratione*)՝ Հաննիբալը, գտնվելով Եփեսոսում (*Ephesus*) արքայի մեջ, հրավիրվել է ոմն Ֆորմիոյի (*Phormio*) ճառը լսելու: Զորավարի արվեստի մասին ճառախոսի երկարաշունչ դատողությունների ավարտից հետո Հաննիբալին հարցրել են, թե նա ինչ կարծիքի է: «Ես մեկ անգամ չեմ, որ տեսել եմ բազմաթիվ ձեր շաղակրատների, բայց որևէ մեկին չեմ տեսել, որն ավելի շատ խոսեր, քան Ֆորմիոն», - պատասխանել է Հաննիբալը [30, p. 275]:

Ռազմավարության տեսությամբ զբաղվելիս պետք է հիշել ռազմավարության մասին հին ասույթը. «Չկա ոչ մի անհնար բան այն մարդու համար, ով չի պատրաստվում անել դա» [7, p. 81]: Եվ ոչ մի դեպքում չի կարելի մոռանալ հետևյալը. մարտադաշտում զինվորականների բանիմացությունը չի կարող փոխհատուցել քաղաքական գործիչների հիմարությունը՝ նպատակները և առկա միջոցները որոշելու գործում: Ռազմական պատմությունը հարուստ է անհուսալի և դատապարտված պատերազմներում փայլուն կամպանիաների բազում օրինակներով:

Երբ ռազմական տեսաբանը գործող զինվորական ստրատեգիստին ասում է, թե նրա խնդիրը դժվարիքականանալի է ռազմավարության մակարդակում, նա իրեն ուղղված գովասանք է սպասում: Տեսաբանը կարող է իրեն թույլ տալ եզրակացություն անել խնդրի անիրականանալիության մասին և վերադառնալ իր տեսական հետազոտություններին, մինչդեռ գործող ստրատեգիստը պետք է որոշում կայացնի և անցնի դրա իրականացմանը՝ անկախ իրադրության անորոշությունից, և ռազմավարությունը, այսպես թե այնպես, պետք է մշակվի ու իրականացվի [7, p. 84]:

2. Ռազմավարության բարդությունը

Ռազմավարությունը թափանցում է պատերազմի ու քաղաքականության ոլորտ և չափից ավելի շատ տարրեր ու չափումներ ունի, որոնք, միմյանց հետ փոխգործակցելով, որակապես բարդացնում են ընդհանուր պատկերը: Ռազմավարության ընդգրկումը շատ ավելի մեծ է ու բազմաչափ, իսկ նրա դինամիկան երբեմն միանգամայն հեռու է սպասվածից: Չնայած ռազմավարության էությունն անփոփոխ է մնում մարդկության պատմության ողջ ընթացքում, նրա բնույթն անընդհատ փոփոխվում է՝ հարմարվելով փոփոխվող տեխնոլոգիաներին, հասարակությանն ու քաղաքական գաղափարներին: Հաղթանակը պատերազմում և ռազմավարության մեջ միշտ չէ, որ հարաբերակցվում է գերիշխող չափումներում գերազանցության հետ, և ռազմական հաղթանակը, ռազմավարական ու քաղաքական հաջողությունը պարտադիր չէ, որ կապված լինեն տեխնոլոգիական, աշխարհագրական, ուժեղ պետական կառույցի կամ առաջնորդների հարցում առավելություն ունենալու հետ, քանի որ հակառակորդը միշտ էլ կարող է միջոցներ գտնել սպասվող ռազմավարական էֆեկտը փոխհատուցելու համար:

Վաղուց արդեն հայտնի է, որ շատ դժվար, գրեթե անհնար է պատրաստել ստրատեգիստներ, ինչի մասին լավ է ասել Նապոլեոնը. «Մարտավարությունը, մանևրները, հրետանին և ինժեներային գիտությունները, ինչպես և երկրաչափությունը կարելի է սովորել ձեռնարկներով, սակայն պատերազմ վարելու բարձրագույն օրենքների իմացությունը կարող է ձեռք բերվել միայն մեծ գեներալների վարած պատերազմների ու ճակատամարտերի պատմությունը և անձնական փորձն ուսումնասիրելու միջոցով: Կարճ ու ճիշտ ոչ մի կանոն գոյություն չունի, ամեն ինչ կախված է այն իրականության բնույթից, որին բախվում է գեներալը, նրա բացառիկ հատկություններից, նրա թերություններից, զորքերի, տեխնիկայի կամ սպառազինությունների բնույթից, տարվա եղանակից և հազարումի այլ հանգամանքներից, որոնք փոխում են իրերի դրությունը» [14, p. 275]:

Նապոլեոնը, ինչպես և Հաննիբալը, լավ գորավար էր, բայց վատ

ստրատեգ և անձնական փորձի միջոցով է հանգել այս մտքի արդարացի լինելուն: Նույն ձևով էլ կայսերական, իսկ այնուհետև՝ նաև նացիստական Գերմանիան, Խորհրդային Միությունը թույլ տվեցին նույն ռազմավարական սխալը՝ հետապնդելով առկա միջոցներին չհամապատասխանող քաղաքական նպատակներ:

Ռազմավարության մեջ խիստ կարևոր է մարդկային կամքի, պատերազմի անհամաձայնության և մշուշի դերի ընկալումը: Անդրե Բեֆրը (*Andre Beaufre*) ռազմավարությունը սահմանում էր որպես «ուժի դիալեկտիկայի արվեստ կամ, ավելի ճիշտ, երկու հակամարտող կամքերի դիալեկտիկայի արվեստ, որոնք ուժն օգտագործում են իրենց հակամարտությունը լուծելու համար» [31, p. 22]: Պատերազմի և ռազմավարության այս ասպեկտը սկզբունքային անկանխատեսելիություն է մտցնում իրադարձությունների զարգացման մեջ: Քոլին Գրեյը, փորձելով համառոտ ձևակերպել ռազմավարության մշակումն ու իրականացումը բարդացնող պատճառները, նշում է դրանցից հետևյալները.

«1. (ռազմավարության) բնույթն ինքը, որը բռնել է ժամանակի և բոլոր մյուս համատեքստերի քննությունը,

2. անհամաձայնության աղբյուրների բազմաքանակությունը և բացարձակ բազմազանությունը,

3. ռազմավարությունը պլանավորվում է այն համատեքստի համար, որը տառացիորեն չի պատահում և չի կարող պատահել. ապագան չի պատահում» [7, p. 82]:

Տեխնոլոգիաներն ի վիճակի չեն փոխել ռազմավարության բարդ էությունը: 1905թ. գեներալ-լեյտենանտ Ռուդոլֆ ֆոն Ցիմերերը (*Rudolf von Caemmerer*) Գերմանիայի գլխավոր շտաբի պետ, ֆելդմարշալ Ալֆրեդ ֆոն Շլիֆենին (*Alfred Graf von Schlieffen*) գրում էր. «Բանակի լայն տարածքով ցրված զորամասերի նախնական կենտրոնացված գործողություններում սխալի նախկին և ներկա սպառնալիքներն ամբողջովին բացառվել են էլեկտրական հեռագրության միջոցով... Դաշտային հեռագրակապ կարող է անցկացվել ամենուրեք այնքան արագ, որքան արագ առաջ են շարժվում զորքերը զորաշարժի ժամանակ, և շտաբը ամեն գիշեր կիմանա, թե ինչպես են գործերը տարբեր բանակներում և կտա համապատասխան հրամաններ» [14, pp. 171-172]:

Բերված փաստարկները կարող են կապի ու հրազենային ոչնչացման տեխնոլոգիական հնարավորություններ ունեցող ստրատեգիստի քմիք-ծաղն առաջացնել, որոնք, այնուամենայնիվ, թույլ չեն տալիս լուծել ռազմավարության և պատերազմի հիմնական խնդիրը: Ավելին, տեխնոլոգիական նորույթները և նոր հնարավորությունները կտրուկ բարդացրել են ստրա-

տեգիստի ինչպես պատրաստումը, այնպես էլ աշխատանքը, քանի որ մեծացել է այն պարամետրերի թիվը, որոնք նա պետք է հաշվի առնի լուծումներ որոնելիս:

Քոլին Գրեյը ներկայացնում է հետևյալ հանձնարարականները, որոնք թույլ են տալիս հաղթահարել ռազմավարության բարդությունը: Ռազմավարական հաջողության հասնելու համար զինված ուժերը պետք է.

- լինեն ներքնապես կապված (կոհերենտ), այսինքն՝ պատշաճ ձևով միավորված,
- ունենան անհրաժեշտ քանակություն և ապահովեն ռազմավարական էֆեկտն ըստ մասշտաբայնացված խնդիրների, որոնք սահմանվում են բարձր քաղաքականության կողմից,
- հարկադրաբար գործի դրվեն ռազմական խնդիրների լուծման համար, որոնք համապատասխանում են քաղաքական նպատակներին [7, pp. 86]:

Այսպիսով, չնայած 21-րդ դարում արագ փոփոխվող ռազմավարական լանդշաֆտին, ռազմավարության բարդությանը հանգեցնող հիմնական խնդիրները անփոփոխ են մնում Հին Հռոմի և Բրիտանական կայսրության ժամանակներից սկսած: Անընդհատ փոփոխվող ռազմավարական միջավայրում, ինչպես և նախկինում, շատ դժվար, բայց և խիստ կարևոր է ռազմավարական գերակայությունները գտնել և որոշել կարողանալը: Արդարացի է մնում նաև «Խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր պատերազմի» հին ասույթը. կայուն խաղաղության ապահովման համար հասարակությունը պարտավոր է պատրաստվել պատերազմի: Այստեղ մենք հանդիպում ենք մի պարադոքսի, երբ այս պատրաստության մեջ չափից ավելի ջանալը երկարաժամկետ հեռանկարում կարող է թուլացնել իշխանության տնտեսական, հոգեբանական և քաղաքական բաղադրիչները՝ դրանով իսկ պատերազմ սանձազերծելով: «Լուծումն այն է, որ ընդհանուր նպատակները, եղանակները (ուղիները, մեթոդները) և միջոցներն այնպես հաշվեկշռվեն, որպեսզի ազգային անվտանգության ոլորտում ներքին և արտաքին քաղաքականությունների միջև բնական լարվածությունը հասցվի նվազագույնի՝ ընդամին նվազագույն ռիսկով ապահովելով կենսականորեն կարևոր ազգային շահերի անվտանգությունը» [6, p. 123]:

Անկասկած, նման հաշվեկշռի հասնելը բարդ խնդիր ու արվեստ էր անհամեմատ ավելի հեշտ ժամանակներում: 21-րդ դարում, երբ աստիճանացույցով աճում է այն գործոնների թիվը, որոնք պետք է հաշվի առնի ստրատեգիստը, ռազմավարությունը մնում է արվեստներից առավել բարդը [32, p. 7]:

3. Ռազմավարության դասակարգումը. ռազմավարական կանխատեսում և հորիզոններ

Ռազմավարական տեսությունների և հայեցակարգերի դասակարգման մի քանի համակարգ գոյություն ունի: Դասակարգումը կարող է կատարվել հայեցակարգային հիմքի վրա՝ տարանջատելով հռչակագրային, հրատապ և կատարյալ ռազմավարությունները: Հռչակագրային ռազմավարությունն այն է, ինչն այս կամ այն պետությունը հռչակում է որպես իր ռազմավարություն: Ընդ որում՝ այն կարող է ինչպես համընկնել երկրի իրական ռազմավարության հետ, այնպես էլ տարբերվել նրանից: Հռչակագրային ռազմավարության լավ օրինակ է ԱՄՆ հայտարարությունը միաժամանակ պատերազմի երկու գլխավոր թատերաբեմերում (*Major Theaters of War*) մարտական գործողությունների մասնակցելու ունակության մասին, թեև վերլուծաբանների մեծ մասի կարծիքով՝ երկրի իրական հնարավորությունները թույլ չեն տալիս նման ռազմավարություն իրականացնել: Ակնհայտ է, որ հռչակված ռազմավարությունից հրաժարումը խնդրահարույց է, և երկիրը չի կարող իրեն թույլ տալ հաճախ փոփոխել այն: Իրական ռազմավարությունը «զննում» է հռչակված ռազմավարության և իրականության միջև եղած տարբերությունները և պատասխանում է այն հարցին, թե ինչպիսի ռազմավարություն կարող է կիրառվել, եթե հռչակագրայինն իրականանալի չէ: Կատարյալ ռազմավարությունը պատասխանում է այն հարցին, թե ինչպիսին կարող էր լինել ռազմավարությունը, եթե անհրաժեշտ ռեսուրսներից օգտվելու անսահմանափակ իրավունք լիներ: Ակնհայտ է, որ նման ռազմավարությունը խաղում է ուսումնական ձեռնարկի դեր և հազվադեպ է համապատասխանում երկրի իրական հնարավորություններին [11, p. 83]:

Ռազմավարության դասակարգման մեկ այլ տեսակ է կազմակերպականը կամ հիերարխիկը: Այս դասակարգումն առանձնացնում է ազգային (կամ մեծ) ռազմավարությունը և ռազմական կամպանիայի (կամ օպերատիվ) ռազմավարությունը: Թեև «օպերատիվ ռազմավարություն» եզրը բավական վիճելի է, այնուամենայնիվ, այն օգտագործվում է գրականության մեջ և մի շարք ռազմական դոկտրիններում, մասնավորապես՝ ԱՄՆ Միավորված ռազմական դոկտրինում: Ազգային ռազմավարությունը կապվում է պետական/ազգային մակարդակի գործողությունների հետ: ԱՄՆ բանակի ռազմական քոլեջը այն սահմանում է որպես «երկրի առավել ընդհանուր մտեցումը միջազգային համակարգում ազգային խնդիրներին հետամուտ լինելու հարցում» [25, p. 12]: Լավ մշակված ազգային ռազմավարությունը ներառում է ազգային հզորության բոլոր տարրերը: Մերօրյա պայմանները թույլ են տալիս մշակել նեղ ազգային ռազմավարություններ, օրինակ՝ սոցիալական կամ ռազմական ոլորտներում, էկոնոմիկայի բնագավառում,

ասկայն նման մոտեցումը դժվար թե կարելի է հաջող և ընդունելի համարել, եթե նույնիսկ ուշադրության առնենք այն փաստը, որ ազգային հզորության որոշ տարրեր նվազագույն ազդեցություն են գործում հասարակական կյանքի այս կամ այն ոլորտի վրա:

Ռազմավարական կանխատեսում. Պատերազմի մշուշի ցրումը, անհամաձայնության և ռազմավարական հորիզոնների գնահատումը բոլոր ժամանակներում պահանջել է մտավոր ուժի բարձր լարում և բարդ արվեստ է հանդիսացել: Նման գնահատականները տարբերվում են անձանթերկրի հետազոտությունից, երբ յուրաքանչյուր քայլափոխի լրացվում են քարտեզի բաց կետերը՝ նվազեցնելով ընդհանուր անորոշությունը: Ռազմավարական հորիզոնները և պատերազմի ընդգրկած տարածքը դինամիկ են, առաձգական և կարող են փոխվել՝ այդ թվում և որպես հետազոտողի ջանքերի ու ազդեցության արդյունք, ինչը տվյալ տարածքի բաղադրիչներից մեկն է [7, p. 83]:

Ընթացիկ իրադրության և առկա փորձի վրա հիմնված ռազմավարական կանխատեսումը զբաղվելիս միշտ հարկ է հիշել այն ասույթը, ըստ որի՝ «կանխատեսումը, հատկապես ապագայինը, բարդ գործ է»¹, և Քոլին Գրեյի նախազգուշացումն այդ գործունեության մասին. «Պատերազմը չպետք է դիտարկվի այն եղանակներով, որոնք այն կտրում են քաղաքական, սոցիալական և մշակութային համատեքստերից: Զինվորական վերնախավը հակված է մշակել տպավորիչ ռազմական լուծումներն այն խնդիրների, որոնք ինքն է նախընտրում լուծել, ոչ թե նրանք, որոնք առաջադրում է ճարտար կամ հաջողակ հակառակորդը:

Միտումների բացահայտումը և վերլուծությունը այնքան էլ օգտակար ուղեցույց չեն ապագայի համար: Ռազմավարական ապագան ուղղորդվում է միտումների հետևանքներով, որոնք մենք տեսնում ենք, միտումներ, որոնք փոխգործակցում են և կարող են հրահրել ոչգծային զարգացում:

Տեղի է ունեցել իրադարձությունների հանկարծակի (անսպասելի) զարգացում: Դրանցից մի քանիսը կարող են հաճելի լինել, մի քանիսը՝ ոչ այնքան: Քիչ հավանական է, որ մենք ավելի խորաթափանց ենք, քան մեր նախնիները: Անհրաժեշտ է զգուշանալ չնախատեսված հետևանքների օրենքի գործողությունից:

Քանի որ պատերազմը մենամարտ է (դուել), առկա են խելացի հակառակորդներ, էլ չենք խոսում նրանց մասին, ովքեր կջանան չընդունել

¹ Չնայած ամերիկյան ստրատեգիստների շրջանում ընդունված է այս ասույթը վերագրել բեյսբոլիստ Յոգի Բերային (*Yogi Berra*), այն կամ այն վարիացիաներով այն հանդիպում է տասնյակ հեղինակների մոտ՝ չինացի փիլիսոփաներից սկսած մինչև Մարկ Տվեն և Նիլս Բոր:

մեզ, պատերազմի ձևը, որն ապահովում է մեր փոխակերպվող ռազմական հզորության անվիճելի ուժը» [33, pp. 16-17]:

Արդի միտումների նույնիսկ ճշգրիտ նույնականացումն ու վերլուծությունը չեն կարող բավարար հիմք ծառայել կանխատեսում անելու համար: Դիտարկվող միտումները զարգանում են զուգահեռ ժամանակի մեջ՝ փոխգործակցելով ինչպես մեկը մյուսի, այնպես էլ համատեքստի հետ, և ապագան ավելի շուտ այդ փոխգործակցությունների և ոչ թե իրենց՝ միտումների արդյունքն ու հետևանքն է: 20-րդ դարասկզբի միտումները չէին կանխագուշակում Առաջին, իսկ 20-ական թվականները՝ Երկրորդ աշխարհամարտերը: 70-ական թթ. գրեթե ոչ մի վերլուծաբան ի վիճակի չէր կանխատեսել ԽՍՀՄ փլուզումը 80-ականների վերջին: Նշանակում է՝ ռազմավարական ապագայի համարժեք պլանավորումը պահանջում է ինչպես առկա միտումների, այնպես էլ դրանց փոխգործակցության հետևանքների իմացություն, ինչն, անկասկած, արվեստ է, ոչ թե գիտություն, և ստրատեգիստն աշխատելիս կարող է հենվել ինտուիցիային և իր ու նախորդ սերունդների փորձին: Ժամանակակից ստրատեգիստները ոչ մի հիմք չունեն անցյալ դարերի ռազմական տեսաբաններին պակաս փորձառու և հմուտ համարելու համար [33, p. 16]:

Ռազմավարական կանխատեսումներով զբաղվելիս հարկ է նկատի ունենալ, որ ապագան անկանխատեսելիության հետ միասին իր հետ բերում է ռազմավարական անսպասելիության տարր: Ինչպես անսպասելիության էֆեկտից, այնպես էլ դրա հետևանքներից գլուխ հանելու համար ուղեցույց սկզբունք և հոգեբանական պատրաստության կարևորագույն տարր պետք է դառնա նվազագույն ափսոսանքը չգուշակված և չհաշվարկված միտումների համար: Պետք է հանգիստ վերաբերվել այն բանին, որ անճանաչելին իսկապես անճանաչելի է, իսկ անհնարինը՝ անհնար [5, p. 28]: «Քանի որ ապագան անկանխատեսելի է, հարկ է խուսափել «տեսանելի ապագա» արտահայտությունից: Մենք պետք է օգտագործենք միայն այն աղբյուրները, որոնց կարելի է վստահել: Մասնավորապես՝ մենք ծրագրում ենք գործել ռազմավարական անորոշ ապագայում՝ հենվելով գործնական խորհուրդների երեք աղբյուրի՝ պատմական փորձ, զգուշության ոսկե կանոն (մենք չպետք է թույլ տանք, որ հույսն իշխի պլանների վրա) և առողջ միտք» [7, p. 86]:

Ապագայի անկանխատեսելիությունը չափազանց կարևոր է դարձնում ապագայի այլընտրանքային սցենարների և համապատասխան ռազմավարությունների մշակումը: 1914թ. Գերմանիան պատրաստվում էր արագ ռազմական կամպանիաներ անցկացնելու իր հնարավորության վրա հիմնված սրընթաց պատերազմի և բոլորովին պատրաստ չէր դիրքային, խրամատային մարտերի: 1941-42թթ. նացիստական Գերմանիան պատ-

րաստվում և ջանում էր իրականացնել բլիցկրիզի ռազմավարություն, սակայն երկու դեպքում էլ, երբ իրականացվող ռազմավարությունները վերածվեցին անիրականանալի, գերմանական զինվորական հրամանատարությունը չուներ պատերազմի այլընտրանքային մոտեցումներ: Գերմանիայի զինված ուժերի փայլուն մարտավարությունն ի վիճակի չեղավ դիմակայել հյուժիչ պատերազմին [33, p. 15]:

Ռազմավարական հորիզոններ. Ռազմական պլանավորմամբ զբաղվելիս կարևոր է ըմբռնել, որ գոյություն ունեն ռազմավարական հորիզոնների տարբեր տեսակներ, որոնք որոշում են, թե որքան ավելի հեռու կարող է կանխատեսել ստրատեգիստը իրադարձությունների զարգացումը: Կանխատեսման հորիզոնները կարող են լինել պարզ, բարդացված և բարդ [34, pp. 215-231]:

18-րդ դարի գեներալի համար իր և հակառակորդի զորքերի բախման օրը, տեղը և ընդհանուր զորադասավորումը պարզ էին: Պարզ էր նաև ապագա ճակատամարտի պլանը. երբ, ինչ հետևողականությամբ են շարժվելու զորքերը և ինչպիսին կլինի հակառակորդի պատասխանը: Թեև նա չէր կարող միանշանակ կանխատեսել ապագա ճակատամարտի ելքը, այնուամենայնիվ, իրադարձության զարգացման հնարավոր սցենարների թիվը բավական փոքր էր և կանխատեսելի: Գեներալը գիտեր ճակատամարտն ավարտելու ճիշտ օրը. վաղը կովում կամ կհաղթի, կամ կպարտվի: Նա գիտեր նաև, որ ի վիճակի է գուշակել, թե որ կողմը կհաղթի և որ իրադարձությունները վճռական ազդեցություն կունենան հաղթանակի համար: 18-րդ դարի գեներալը կանխատեսելու պարզ հորիզոններ ուներ:

Մի փոքր այլ էր դրությունը դեպի Վայրի Արևմուտք շարժվող ԱՄՆ հեծելազորայինների ջոկատի համար 19-րդ դարում: Ջոկատի հրամանատարը տեղանքին ծանոթ չէր, և ջոկատը կարող էր հանդիպել մեծ գետի կամ անանցանելի ձորերի: Նա չգիտեր նաև, թե որտեղ կարող է ջոկատը հանդիպել հնդկացիական ցեղերի, որոնց հետ ստիպված պետք է լիներ անմիջապես մարտի բռնվել: Այն, ինչ քիչ թե շատ պարզ էր հրամանատարին, ջոկատի շարժման ընդհանուր ուղղությունն էր, սակայն անվերահսկելի և անկանխատեսելի մեծաթիվ գործոնների պատճառով նա ի վիճակի չէր կանխատեսել և գուշակել վաղվա օրվա իրադարձությունները: Ի հետևանք ջոկատի հրամանատարը պետք է մշտապես գտնվեր լիակատար մարտունակ վիճակում և սկզբում ուղարկեր հետախույզների, ովքեր կմեծացնեին կանխատեսման նրա սեփական տեսադաշտը: Դա թույլ էր տալիս նրան վստահ լինել այն հարցում, որ կհասցնի «զգալ» վտանգը, պատրաստվել դրան և անհրաժեշտության դեպքում անմիջապես մարտի մեջ մտնել: Բացի այդ, հրամանատարն ուներ համեմատաբար անորոշ ժամանակային հորի-

գոններ, և նրա արշավանքը կարող էր տևել օրեր կամ շաբաթներ: Նա գիտեր, թե ինչ իրադարձություններ կարող են տեղի ունենալ, ինչ խոչընդոտների և հակառակորդի կարող է բխվել ջոկատը, բայց բազմաթիվ անհայտ գործոնները, դրանց համակցումն ու փոխազդեցությունն անհնար էին դարձնում արշավի ավարտվելու ժամկետների կանխատեսումը:

Եվ վերջապես, միանգամայն այլ էր բոսնիական քաղաքական գործչի դրությունը 1995թ., երբ շատ դժվար էր հասկանալ, թե ով է բարեկամ, իսկ ով՝ թշնամի: Նրա բանակը կովում էր բոսնիացի սերբերի բանակի դեմ, որտեղ կովում էին իր ազգականները: Սկզբում Բոսնիան կովում էր խորվաթների դեմ, որոնք այնուհետև դարձան դաշնակիցներ: Ինչ կարող էր սպասել բոսնիական քաղաքական գործիչը ՄԱԿ և ՆԱՏՕ անվտանգության ուժերից, արևմտյան քաղաքական գործիչներից, Բելգրադից, Չագրեբից, Մոսկվայից: Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ նրան թվում էր, թե գիտի, նա ոչինչ էլ չգիտեր, քանի որ հաջորդ օրն իրադրությունն արմատապես փոխվում էր: Բոսնիական քաղաքական գործիչը ժամանակի անորոշ հորիզոն ուներ և ի վիճակի չէր անվանել բոլոր ակտորներին ու իրադարձությունները, որոնք կարող էին ազդել այն դրամայի ելքի վրա, որի մի մասն էր իր ժողովուրդը: Ի տարբերություն հեծելազորային ջոկատի հրամանատարի, որի խնդիրն էր ամրագրված տեղանքով (բաղկացած ծանոթ, բայց դեռևս անկանխատեսելի տարրերից) առաջ շարժվելը, բոսնիական քաղաքական գործչի սոցիալական լանդշաֆտը առաձգական էր և անընդհատ ձևափոխվում էր այն ազդեցություններին ի պատասխան, որոնք իրականացնում էր նա ու իրադարձությունների մյուս մասնակիցները: Նրա նպատակը միշտ գտնվել է կանխատեսման հորիզոնի սահմանից անդին, և կապն այն բանի միջև, թե ինչ է նա ուզում և ուր է գնում, միշտ եղել է նրբին ու անորոշ: Բոսնիական քաղաքական գործչի կանխատեսման հորիզոնը բարդ էր:

Եթե կանխատեսման ռազմավարական հորիզոնները պարզ են, ապա կարող են կիրառվել որոշումների ընդունման և ռազմավարական պլանավորման տեսության լավ մշակված մաթեմատիկական մեթոդներ: Բարդացված հորիզոնի պայմաններում ռազմավարական պլանավորումը վերածվում է անընդհատ հետազոտության, փորձարկման և արագ հարմարվելու գործընթացի: Կանխատեսման բարդ հորիզոնների դեպքում աշխարհի կառուցվածքն ինքը, որտեղ գործառույց են ակտորները, ենթակա է փոփոխությունների: Ինչ է նշանակում ռազմավարությունը, երբ «ձեր աշխարհն ակտիվորեն կառուցվում է, դու շինարարական բրիգադի մասն ես, և ոչ մի նախագիծ չկա» [34, p. 91]: Այսօրվա դրությամբ ռազմավարական տեսությունն ի վիճակի չէ առաջարկել համարժեք մեթոդներ բարդ հորիզոնների հետ գործառելու համար և դիմում է ստրատեգիստի, հրամանատարի ու քաղաքական գործչի հանճարին, ինտուիցիային և փորձին:

4. Ռազմավարական անսպասելիության հայեցակարգը

Սրընթաց փոփոխվող ռազմավարական միջավայրը հանգեցնում է նրան, որ մեր օրերի եթե ոչ գլխավոր, ապա առավել հրատապ ռազմավարական հայեցակարգը դառնում է ռազմավարական անսպասելիությունը: Ցավոք, հանկարծակիությունը պատկանում է հասկացությունների այն տեսակին, ինչ և ասիմետրիան, անորոշությունը, անհամաձայնությունը, որոնցով շատ դժվար է գործառել մարտավարության նեղ սահմաններից դուրս [35, p.122]: Ռազմավարական անսպասելիության հետ պայքարի առաջին հայացքից ակնհայտ եղանակը հետախուզության գործառույթի և դերի վերանայումն է: Սակայն նոր հետախուզական մարմինների ստեղծման կամ եղածների բարեփոխման հետ կապված բյուրոկրատական մոտեցման փորձերը մարզինալ են և թույլ չեն տալիս գլուխ հանել ռազմավարական և առավել ևս՝ քաղաքական անսպասելիությունից [5, p. 6]:

Ակնհայտ է, որ հիմնական խնդիրը այնքան էլ իրական աշխարհի անկանխատեսելիության անխուսափելի ուղեկիցը հանդիսացող անսպասելիությունը չէ, այլ անսպասելիության ռազմավարական էֆեկտը, և հարցն այն է, թե ինչպիսին կլինեն անսպասելիության հետևանքները:

Ջեյմս Վիրցն (*James Wirtz*) իր աշխատությունում բացատրում է. «Հանկարծակիությունը ժամանակավորապես ճնշում է պատերազմի (կամ որևէ այլ ռազմավարական մրցակցության) դիալեկտիկական էությունը մարտադաշտից ակտիվ հակառակորդին բացառելու միջոցով: Հանկարծակիությունը պատերազմը վերածում է ստոխաստիկ ուսմունքի, որում որևէ իրադարձության հավանականությունը կարող է որոշվել ճշգրտության այս կամ այն աստիճանով կամ առավել հազվադեպ՝ իրադարձության հետևանքը ոչ միայն կարող է նախապես սխալ հաշվարկվել, այլև որոշվում է հակամարտության մասնակիցներից միայն մեկի կողմից» [36, p. 103]:

Կլաուզևիցից մինչև ծովակալ Ուայլի բոլոր ռազմական տեսաբանները միակարծիք էին այն հարցում, որ անսպասելիության ռազմավարական էֆեկտի հասնելու համար պատերազմի չափազանց կարևոր տարր է հանդիսանում իրավիճակի վերահսկման պահպանումը: «Պատերազմ վարելու մեջ ստրատեգիստի գլխավոր նպատակը, որոշակի աստիճանով, հակառակորդին սեփական նպատակների համար կառավարելն է. դա ձեռք է բերվում պատերազմի մոդելի (պատերնի) կառավարման միջոցով, ինչն իր հերթին ապահովվում է պատերազմի ձգողականության կենտրոնի մանիպուլյացիայով՝ սեփական առավելությունն ձեռք բերելու համար և ի վնաս հակառակորդի» [28, pp. 77-78]:

Անսպասելի հարձակումը նպատակ ունի ճնշել պատերազմի մենամարտային էությունը, բացառել նրա դիալեկտիկական: Իդեալական պատկեր-

րացմամբ՝ այն ամբողջությամբ ճնշում է հակառակորդին՝ նրան վերածելով անօգնական զոհի, որն ի վիճակի չէ դուրս գալ այն վիճակից, որում հայտնվել է, և ոտքի կանգնել հասցված հարվածից հետո: Հակառակորդն անընդհատ ուշանում է և ստիպված է միայն հակադարձել հարձակվող կողմի ակտիվությանը: Նրա բոլոր մտադրություններն ու պլաններն անհուսալիորեն ուշանում են և չեն համապատասխանում նոր իրականությանը, որը ձևավորում է հարձակվող կողմը:

Փաստորեն, այս նույն գաղափարն է ընկած Ջոն Բոյդի «դիտում, կողմնորոշում, որոշում, գործողություն» (ԴԿՈԳ) (*John Boyd's observation, orientation, decision, action (OODA) loop*) ցիկլի հայեցակարգի հիմքում¹: Առաջին անսպասելի հարձակումից հետո հարձակման ենթարկվածի ԴԿՈԳ ցիկլում համարժեք ռեակցիայի մշակումների արագությունը, նրա գործողություններն ու պատասխան քայլերը միշտ ներառված են լինում հարձակվողի ԴԿՈԳ ցիկլում՝ նրան ոտքի կանգնելու հնարավորություն չտալով: Այսինքն՝ նախաձեռնությունը, որ հանկարծակիության ռազմավարության կիրառման արդյունքն է, մշտապես մնում է հարձակվողի ձեռքում: Մշակելով իր հայեցակարգը՝ Բոյդը հենվում էր օդային մարտերի մղման մարտավարությանը, որն ընդհանրացնելով տարածում է ռազմավարության և քաղաքականության ոլորտների վրա:

Անսպասելիությունն ըստ սահմանման վերահսկվում է հարձակվողի կողմից, և հենց նրան է պատկանում նախաձեռնությունը, սակայն անսպասելիության էֆեկտի հետևանքները կարող են վերահսկվել հարձակման ենթարկվածի կողմից: 2003թ. ռազմական գործողությունն Իրաքում անսպասելիության դրսևորում էր, սակայն Վաշինգտոնի հավատը, թե ոմբահարումների «ցնցումն ու սարսափը» թույլ կտան հասնել ցանկալի արդյունքի՝ կաթվածահար անել Իրաքն ու զրկել դիմակայելու կարողությունից, չարդարացավ [5, pp. 10-11]:

Հարձակվողը կարող է հանկարծակիի բերել հակառակորդին ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ հաջորդող էֆեկտներով, և եթե հարձակման ենթարկվողն ի վիճակի չէ հասկանալ պատերազմի էությունն ու նպատակները, նա դատապարտված է շոշափելի հարվածներ ստանալու: Եթե պատերազմի էությունն անհամարժեք է հասկացվում, այդ դեպքում քաղաքականությունը ևս, որ որոշում է պատերազմի նպատակները, անհամարժեք է դուրս գալիս, իսկ թափված արյունն ու վատնված նյութական ռե-

¹ Բոյդը երբեք չի հրապարակել իր ԴԿՈԳ ցիկլի տեսությունը: Այն կարելի է գտնել «*A Discourse on Winning and Losing*» անտիպ աշխատանքում [38]: ԴԿՈԳ ցիկլի լավագույն նկարագրություններից մեկը տրված է Դևիդ Ֆեյդոլի «*John Boyd and John Warden: Airpower's Quest for Strategic Paralysis*» գրքում [39, pp. 141-143]: Բոյդի մասին լավագույն գրքերից մեկն է *Coram, Robert, Boyd: The Fighter Pilot Who Changed the Art of War, Boston: Little, Brown, 2006* [40]:

սուրսներն իզուր են լինում: Ինչպես արդարացիորեն նկատում է Հարթը, «անջրպետի կետն ու հանկարծակիության և հանկարծակիության էֆեկտի միջև տարբերությունը պատերազմի տեսության իմաստն են» [37, p. 325]:

Ռազմավարական անսպասելիության հայեցակարգում մեծ դեր է հատկացվում համատեքստին: Ծագել է լատիներեն *contextere* բառից և ունի երկու նշանակություն. առաջինը և առավել շատ կիրառվողը նշանակում է «այն, ինչ շրջապատում է», երկրորդը՝ «այն, ինչ միահյուսվում է (գործվում, միացվում է) միասին» [22, Ch. 5]: Առանձնացված երեք հիմնական՝ աշխարհաքաղաքական, մշակութային և տեխնոլոգիական համատեքստերից ռազմավարական անսպասելիության վրա ներկայումս առավել մեծ ազդեցություն է թողնում աշխարհաքաղաքականը. «Ինչպես մենք պնդում ենք, հնարավոր ռազմավարական հանկարծակիության պայմաններն ուղղորդվում են աշխարհաքաղաքական համատեքստով և ոչ թե տեխնոլոգիայով, մշակույթով կամ խելացի պաշտոնատար անձանց կողմից» [41]:

5. Ռազմավարության հարմարվողականությունը և ռազմական ոլորտի փոխակերպման խնդիրները

Ինչպես արդեն նշվել է, ռազմավարությունը և իրավիճակի ռազմավարական գնահատումն ու վերագնահատումը հաղթանակի անհրաժեշտ տարրերն են, իսկ տեղի ունեցող փոփոխություններին հարմարվել չցանկանալը կարող է ունենալ ճակատագրական հետևանքներ: «Առաջին համաշխարհային պատերազմի զինվորական առաջնորդների սերնդի մեծագույն սխալը փոփոխություններին արագ հարմարվելուց հրաժարումն էր (ակնառու բացառություններով) [42, p. 5]: Պելոպոնեսյան պատերազմի 390 տարիների ընթացքում սպարտացիներն ավելի լավ էին հարմարեցնում իրենց ռազմավարությունն առկա իրադրությանը, քան աթենացիները: Սպարտան, որ ցամաքային պետություն էր, սովորում էր, թե ինչպես է կռվում ծովային պետություն Աթենքը, որը սովոր էր նրան, որ «բավական է միայն հաղթել ծովում»: Կորնթոսցիները աթենացիներին մինչև պատերազմը նկարագրում էին որպես «արագ, ագրեսիվ և առաջավոր», սակայն արդեն պատերազմի ավարտին «դանդաղաշարժ, ավանդապաշտ, երևակայությունից զուրկ սպարտացիներն» ավելի լավ էին կարողանում հարմարվել պատերազմի պայմաններին [43, p. 55]:

Հռոմեական կայսրության վերելքին նախորդող երկրորդ Պունիական պատերազմի գրեթե ճակատագրական աղետները և Հաննիբալի հաղթանակները հարկադրեցին հռոմեացիներին հարմարեցնել իրենց ռազմավարությունը: Հարձակողական ռազմավարություն որդեգրած ռազմական պետությանը միանգամայն խորթ էր հակառակորդին ուժասպառ անելուն

ուղղված պաշտպանական ռազմավարությունը [4, pp. 80-81]: Այնուամենայնիվ, բախվելով Հաննիբալի հանճարին ու Տրեբիայում (*Trebbia*), Տրասիմենեում (*Trasimene*) և Կաննահում (*Cannae*) տարած նրա հաղթանակներին, որոնք Հռոմեական Հանրապետությունը հասցրին աղետի եզրին, հռոմեական դիկտատոր Ֆաբիուսը (*Fabius*) վերափոխեց հռոմեական ռազմավարությունը [44, pp. 236-275]: Նա այն փոխարինեց «գործնական ողջամտությամբ՝ ավանդական խիզախության համար և հակառակորդի առջև նահանջելով՝ չորրորդ, հնարավոր է՝ ճակատագրական պարտությունից խուսափելու նպատակով» [4, p. 84: Հռոմը կարողացավ վերափոխել և հարմարեցնել իր մինչ այդ հաղթական ռազմական ստրատեգիան՝ գոյատևման համար: Մեկ դար անց Պոլիբիուսը (*Polybius*), լուսաբանելով Հռոմի ուժեղ կողմերից մեկը, խոսում էր նրա՝ սովորույթները, գենքն ու մարտավարությունը հարմարեցնելու կարողության մասին, որպեսզի «ընդօրինակի այն, ինչն ավելի լավ են արել ուրիշները» [44, pp. 318-338]:

Մոլտկեն, նկարագրելով պատերազմի բարդ էությունը, հրամանատարներին կոչ էր անում օգտագործել հանճարեղությունը, ոգին (*genius*), փորձը, կրթությունը և հարմարվողականությունը: «Յուրաքանչյուր մեծ ճակատամարտի նյութական և բարոյական հետևանքները, սակայն, այնքան լուրջ են, որ դրանց շնորհիվ ստեղծվում է միանգամայն այլ իրավիճակ, որն այնուհետև նոր գնահատականների հիմք է դառնում:

Գործողությունների ոչ մի պլան չի կարող դիտարկվել մի ինչ-որ որոշակիությամբ՝ հակառակորդի մեծ ուժերի հետ առաջին հանդիպումից հետո: Հրամանատարը հարկադրված է ամբողջ կամպանիայի ընթացքում որոշումներ ընդունել այն իրավիճակների հիմքի վրա, որոնք չեն կարող կանխատեսվել: Ուստի, պատերազմի հետագա բոլոր քայլերը նախապես մտածված պլանի իրականացումը չեն, այլ ռազմական առողջ բանականությամբ ուղղորդվող սպոնտան գործողություններ:

Հիմնախնդիրն առկա իրավիճակի անհամար քանակությամբ հատուկ դեպքերի, փաստերի կոռեկտ գնահատման և անհայտ տարրերը ճիշտ գուշակելու մշուշապատ անորոշությունը հասկանալու մեջ է՝ արագ որոշում կայացնելու և այնուհետև անսասան կամքով այն իրագործելու համար...

Ակնհայտ է, որ տեսական գիտելիքները բավարար չեն, սակայն հենց այստեղ է մտքի և բնավորության ուժը՝ թեև ռազմական պատրաստություն անցած, սեփական կամ ռազմական պատմության փորձով ուղղորդվող, ստանում ազատ, գործնական և արտիստական արտահայտություն» [45, p. 179]:

ԱՄՆ արդի ռազմական ստրատեգիայի հիմքում ընկած փոխակերպման (որը թույլ է տալիս ամերիկյան ռազմական մեքենան համապատասխանեցնել 21-րդ դարի պահանջներին) կարևորագույն ասպեկտներն են

դառնում ռազմավարական մշակույթի հիմնախնդիրները: «Արժեքները և մշակույթը ռազմական հիերարխիաների և մեծ բյուրոկրատիաների ինտեգրացիայի բնածին պահպանողականության կենսական ինստիտուցիոնալ հակակշիռն են» [46, p. 42]: Մշակույթը պետք է դրդի առաջնորդներին և ամբողջ ռազմական վերնախավին քննադատաբար գնահատել իրավիճակը և հարմարվել տեղի ունեցող փոփոխություններին: Հարմարվողականությանը պատերազմի սկզբունքի կարգավիճակ տալը ռազմավարական մշակույթի մեջ փոփոխություններ կատարելու ազդակ կդառնա, ինչն իր հերթին հետագա նորույթների խթան կհանդիսանա: Դրանով հանդերձ հարմարվելը և հարմարվողականությունը դառնում են հաջող փոխակերպման կարևորագույն մշակութային դոմինանտները:

Եզրակացություններ

Աշխարհաքաղաքական և քաղաքական բարդ իրադրությունում, որը բնութագրվում է անորոշությամբ ու դինամիզմով, հայկական պետականության և նրա հիմքը կազմող ռազմական կազմակերպության կայուն զարգացումը պահանջում է համապատասխան տեսական հենքի մշակում:

Ակնհայտ է, որ պետությունը կարող է իրեն թույլ տալ չունենալ հստակ ձևակերպված ռազմավարական նպատակներ ռազմական ոլորտում, ինչը երբեմն որոշ տարածք է ապահովում մանևրի համար, որը թույլ է տալիս խուսափել բացահայտ պատերազմից: Խոսքը, փաստորեն, խույս տալու քաղաքականության մասին է, որը պաշտպանական է, ռեակտիվ և կարող է հաջող լինել բավական կարճ ժամանակի համար:

Նման մոտեցման փորձերը մեծ ռազմավարության, ազգային անվտանգության և ազգային շահերի ոլորտում ավելի քան կասկածելի են թվում:

Վերականգնելով ընդհատված ռազմական ավանդույթներն ու մշակույթը՝ Հայաստանը կարող է և պետք է հենվի մշակութային, փիլիսոփայական և ռազմավարական մտքի արևմտյան ձեռքբերումներին:

Հայաստանն արևմտյան ռազմական մտքի զարգացման անցած ուղին չկրկնելու և վերջին դարերի ընթացքում (երբ կորցրել էր պետականությունը) Արևմուտքի զարգացման ձեռքբերումներից օգտվելու եզակի հնարավորություն ունի: Հայ հոգևոր և մշակութային ավանդույթի անընդհատությունը հիմք կտա խոսել նման հնարավորությունից օգտվելու մասին, ինչը թույլ կտա մեր երկրին զբաղվել բանակաշինությամբ, ռազմական կառույցը և ամբողջ ռազմական ոլորտը համապատասխանեցնել 21-րդ դարի իրողություններին: Այս ամենի կարևորությունը դժվար է գերազնահատել:

Մեպտեմբեր, 2006թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Sun Tzu*, The Art of War, London, Oxford University Press, 1963 (translated by S.B. Griffith with a foreword by B. H. Liddell Hart; accepted in the Chinese Translations Series of UNESCO).
2. *Gray Colin S.*, «Defense Planning for the Mystery: Four Principles for Guidance in a Period of Nonlinear Change,» *Airpower Journal*, Vol. 5, No. 2, Summer, 1991. 1, September 2006. <http://www.airpower.maxwell.af.mil/airchronicles/apj/2sum91.html>
3. *Builder Carl H.*, The Masks of War: American Military Styles in Strategy and Analysis, Baltimore: Johns Hopkins University Press, 1989.
4. *Bernstein Alvin H.*, «The Strategy of a Warrior-State: Rome and the Wars against Carthage, 264-201 B.C.,» in *The Making of Strategy: Rulers, States, and War*, Williamson Murray, MacGregor Knox, and Alvin Bernstein, eds., New York, 1994.
5. *Gray Colin S.* Transformation and Strategy Surprise. Strategic Studies Institute (SSI), U.S.Army War College, Carlisle Barracks, April 2005. 1 September 2006. <http://www.strategicstudiesinstitute.army.mil/pdffiles/PUB602.pdf>
6. *Jablonsky David*, «Why Is Strategy Difficult.» in *Bartholomees, J. Boone Jr., (ed.) U.S. Army War College Guide to National Security Policy and Strategy Revisited*, Strategic Studies Institute (SSI), U.S. Army War College, Carlisle Barracks, June 2006. 1 September 2006 <<http://www.strategicstudiesinstitute.army.mil/pdffiles/PUB708.pdf>>
7. *Gray Colin S.*, "Why Strategy is Difficult," *JFQ* Summer, 1999, USA, pp. 80-86.
8. *Chandler David G.*, The Campaigns of Napoleon, New York: Macmillan, 1966.
9. *Clausewitz, Carl von.*, Two Letters on Strategy, Peter Paret and Daniel Moran, eds. and trans., Carlisle, PA: U.S. Army War College, 1984.
10. *Clausewitz Carl von*, On War, *Michael Howard and Peter Paret*, trans., Princeton: Princeton University Press, 1976.
11. *Bartholomees, J. Boone Jr.*, «A Survey of Strategic Thought.» in *Bartholomees, J. Boone Jr., (ed.) U.S. Army War College Guide to National Security Policy and Strategy Revisited*, Strategic Studies Institute (SSI), U.S. Army War College, Carlisle Barracks, June 2006. 1 September 2006, <<http://www.strategicstudiesinstitute.army.mil/pdffiles/PUB708.pdf>>
12. *Clausewitz Carl von*, On War, *Michael Howard and Peter Paret*, trans., Princeton: Princeton University Press, 1976.
13. *Jomini, Antoine Henri Baron de.* *The Art of War*, *G. H. Mendell, W. P. Craighill*, trans., 1862, reprinted by The West Point Military Library series, *Thomas E. Griess and Jay Luvass*, eds., Westport, CT: Greenwood Press, 1971.
14. *Caemmerer, Rudolf von.* The Development of Strategical Science During the 19th Century, translated by *Karl von Donat*, London: Hugh Rees, 1905.
15. *Corbett, Julian S.*, Some Principles of Maritime Strategy, introduction and notes by *Eric J. Grove*, Annapolis, MD: Naval Institute Press, 1988. 1 September 2006. <<http://www.gutenberg.org/files/15076/15076-h/15076-h.htm>>.
16. *Cordesman Anthony*, «What is Next in Iraq? Military Developments, Military Re-

- quirements and Armed Nation Building.» Washington, DC: *Center for Strategic and International Studies (CSIS)*, August 2003. 1 September 2006. <http://www.csis.org/media/csis/pubs/iraq_whatsnext.pdf>.
17. *Liddell Hart, Basil H.*, *Strategy*, 2nd edition, 1954, reprint, New York: Frederick A. Praeger, 1967.
 18. *Howard Michael.*, «Lessons of the Cold War.» *Survival*, Vol. 36, No., 4, Winter 1994-95, p. 165.
 19. *Luttwack Edward N.*, *Strategy: The Logic of War and Peace*. The Belknap Press of Harvard University Press, Cambridge, 1987.
 20. *Crevelde Martin Van*, *The Transformation of War*, New York: The Free Press, 1991.
 21. *Crevelde Martin Van*, «The Transformation of War Revisited.» in *Robert J. Bunker*, ed., *Non-State Threats and Future Wars*, London: Frank Cass, 2003.
 22. *Grave Colin S.*, *Modern Strategy*, Oxford: Oxford University Press, 1999.
 23. Joint Staff, Joint Publication 1-02, *DOD Dictionary of Military and Associated Terms*, Washington, DC: United States Department of Defense, 2001. 1 September, 2006. http://www.dtic.mil/doctrine/jel/new_pubs/jp1_02.pdf.
 24. Joint Staff, *Joint Doctrine Encyclopedia*, Washington, DC: United States Department of Defense, 1997. 1 September, 2006. http://www.fas.org/man/dod-101/dod/docs/encyd_h.pdf.
 25. *Dorff Robert H.*, «A Primer in Strategy Development.» in *U.S. Army War College Guide Strategy*, *Joseph R. Cerami and James F. Holcomb, Jr.*, eds., Carlisle Barracks, PA: Strategic Studies Institute, 2001. 1 September, 2006. <<http://www.strategicstudiesinstitute.army.mil/pubs/display.cfm?pubID=362>>
 26. *Chilcoat Richard A.*, «Strategic Art: The New Discipline for 21st Century Strategists.» in *U.S. Army War College Guide Strategy*, *Joseph R. Cerami and James F. Holcomb, Jr.*, eds., Carlisle Barracks, PA: Strategic Studies Institute, 2001. 1 September, 2006. <<http://www.strategicstudiesinstitute.army.mil/pubs/display.cfm?pubID=362>>
 27. *Murray Williamson, Mark Grimsley.*, «Introduction: On Strategy.» in *The Making of Strategy: Rulers, States, and War.* *Williamson Murray, MacGregor Knox, Alvin Bernstein*, eds., New York, 1994.
 28. *Wylie Joseph C.*, *Military Strategy: A General Theory of Power Control*, Annapolis, MD: U.S. Naval Institute Press, 1989 <1967>.
 29. *Crevelde, Martin van.*, «Eternal Clausewitz.» in *Clausewitz and Modern Strategy*, *Michael L. Handel*, ed., London: Frank Cass, 1986.
 30. *Lazenby, J. F.*, *Hannibal's War: A History of the Second Punic War*, Warminster, UK: Aris and Phillips, 1978.
 31. *Beaufre André.*, *An Introduction to Strategy*, London: Faber and Faber, 1965.
 32. *Kennedy Paul*, ed., *Grand Strategies in War and Peace: Toward a Broader Definition*, New Haven, CT: Yale University Press, 1991.
 33. *Gray Colin S.*, «How Has War Changed Since the End of the ColdWar?» *Parameters*, U.S. Army War College, Spring 2005. 1 September 2006. <<http://>

- www.carlisle.army.mil/USAWC/Parameters/05spring/gray.pdf>
34. Lane D., R. Maxfield, "Strategy under Complexity: Fostering Generative Relationships," *Long Range Planning*, 1996, 29 (2), pp. 215-231. 1 September 2006. http://www.plexusinstitute.org/edgeware/archive/think/main_filing9.html.
 35. Watts Barry D., "Clausewitzian Friction and Future War," *McNair Paper* 52, Institute for National Strategic Studies (INSS), National Defence University (NDU), Washington DC, October 1996 (Revised July 2000). 1 September 2006. < <http://www.ndu.edu/inss/McNair/mcnair52/mcnair52.pdf> >.
 36. Wirtz James, «Theory of Surprise,» in Richard K. Betts and Thomas G. Mahnken, eds., *Paradoxes of Intelligence: Essays in Honor of Michael I. Handel*, London: Frank Cass, 2003.
 37. Liddell Hart, Basil H., *History of the First World War*, London: Pan Books, 1972.
 38. Boyd John R., «A Discourse on Winning and Losing,» *Air University document MU43947*, briefing, 1987. 1 September 2006. http://www.d-n-i.net/second_level/boyd_military.htm.
 39. Fadok David S., «John Boyd and John Warden: Airpower's Quest for Strategic Paralysis,» *The Paths of Heaven: The Evolution of Airpower Theory*, Maxwell AFB, AL: Air University Press, 1997. 1 September 2006.<http://aupress.au.af.mil/SAAS_Theses/Fadok/fadok.pdf>.
 40. Coram Robert Boyd, *The Fighter Pilot Who Changed the Art of War*, Boston: Little, Brown, 2002.
 41. Gray Colin S., *Another Bloody Century: Future Warfare*, London: Weidenfeld and Nicolson, 2005.
 42. Leonard Robert R., *The Principles of War for the Information Age*, Novato, CA, 1998.
 43. Kagan Donald, «Athenian Strategy in the Peloponnesian War,» in *The Making of Strategy: Rulers, States and War*, Williamson Murray, Macgregor Knox, Alvin Bernstein, eds., New York: Cambridge University Press, 1994.
 44. Polybius, *The Rise of the Roman Empire*, trans. Ian Scott-Kilvert, New York: Penguin Books, 1979.
 45. Earle Edward Mead, ed., *The Makers of Modern Strategy: Military Thought from Machiavelli to Hitler*, Princeton, NJ: Princeton University Press, 1944.
 46. Dorn, Edwin, et al., *American Military Culture in the Twenty-First Century: A Report of the CSIS International Security Program*. Center for Strategic and International Studies (CSIS), Washington DC, February 2000.

ВОЕННЫЕ АСПЕКТЫ СТРАТЕГИИ

Рачья Арзуманян

Резюме

В сложной политической и геополитической обстановке, характеризующейся неопределенностью и динамизмом, устойчивое развитие армянской государственности и ее базиса – военной организации Армении – требует разработки соответствующей теоретической основы.

Очевидно, что государство может позволить себе не иметь четко сформулированных стратегических целей в военной сфере, что порой обеспечивает некоторое пространство для маневра, позволяющее избегать открытой войны. Речь, фактически, идет о политике уклонения, которая по определению является оборонительной, реактивной и может быть успешной на достаточно коротком отрезке времени. Попытки аналогичного подхода в сфере большой стратегии, национальной безопасности и национальных интересов представляются более чем сомнительными.

Восстанавливая прерванные военные традиции и культуру, Армения может и должна опереться на достижения западной культурной, философской и стратегической мысли. Армения имеет уникальный шанс не повторять весь эволюционный путь западной военной мысли, воспользовавшись плодами развития Запада на протяжении последних веков, в период отсутствия армянской государственности. Непрерывность армянской духовной и культурной Традиции позволяет говорить о возможности подобного скачка. Он позволит Армении заняться строительством вооруженных сил, военной организации, всей военной сферы в соответствии с реалиями XXI века. Важность такого рода прорыва трудно переоценить.